

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

Ք

Ս

ԳՐԻՉԱ ԵՐԱՉ Է

Կ

ՏԵՄԿՈՒՄ

Դ



Ք

Բ Ա Ղ Դ Ա Ս Ա Ր Յ Ա Ն

ԱՆԻՍԱ ԲԱՂԳԱՍԱՐՅԱՆ

**ԳՐԻՉՍ ԵՐԱԶ Է  
ՏԵՄԵՈՒՄ**

«Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն  
Ստեփանակերտ 2014

**Տպագրվում է ԼՂՀ պետպատվերով**

ՀՏԴ 891.981-1 Բաղդասարյան  
ԳՄԴ 84Հ-5  
Բ 242

Բ 242 Գրիչս երազ է տեսնում/ Ա. Բաղդասարյան.-  
Ստեփանակերտ: «Վաչագան Բարեպաշտ» հրատ.,  
2014թ.,- 240 էջ:

*«Գրիչս երազ է տեսնում» ժողովածուն Ալիսա Բաղդասարյանի նոր գիրքն է: Հեղինակն այն կարծիքին է, որ պոեզիան պգալմունքների արտահայտության միջոց չէ միայն, այլև... անդրադարձ վերին ոլորտների, անշոշափելի ու բարդ հոսանքի ժամադրավայր:*

*Գրքում ընդգրկված բանաստեղծությունները պոեզիա են բերում թարմություն, մտածողության ալատություն, հուպատատ հոգու գունագեղություն ու սեր:*

ՀՏԴ 891.981-1 Բաղդասարյան  
ԳՄԴ 84Հ-5

ISBN 978-9939-1-0104-0

© Ա. Բաղդասարյան, 2014թ.

ԱՆԻՍՏ ԲՆԴԴՄԱՌՅԱՆ

ԽՈՏԻ  
ԱՂԵՐԱԴԷ



Բառե՛ր,  
Դուք՝ ամրոցներ  
Կառուցելու  
Անսպառ պաշար:  
Դուք՝ գերող,  
Գերապանցող  
Կյանքի աշխարհ:  
Բառե՛ր,  
Դուք՝ լուսնին հասնող  
Երկինք...  
Դուք՝ բավապատկված,  
Գերհպոր թեւեր առած  
Հայտնվում եք ամենուրեք,  
Նայած թե երբ,  
Եվ ում համար, բառե՛ր...



Ես քա՛ր եմ, որ դիմանամ,  
Սա՛ր եմ, որ կանգուն մնամ,  
Չա՛ր եմ, որ անեծքներ տամ,  
Սո՛ւր եմ, որ պատյանում մնամ,  
Ջո՛ւր եմ, որ գնալուց չհագե՛նամ,  
Հո՛ւր եմ, որ վառվելուց ուժեղանամ,  
Կո՛ւր եմ, որ խենթ ղեմքեր չտեսնեմ,  
Խո՛ւլ եմ, որ պիղծ խոսքեր չլսեմ,  
Թո՛ւր եմ, որ բազմերանգ եմ,  
Մի՛րգ եմ, որ ամեն տարի հասնեմ,  
Դի՛րք եմ, որ փողով բարձրացվեմ,  
Գի՛րք եմ, որ դարերով ապրեմ,  
Վե՛րք եմ, որ չարերին կործանեմ,  
Ձե՛ռք եմ, որ լկտիին հարվածեմ,  
Խե՛լք եմ, որ 60-ից հետո լցվեմ  
Եվ վերջապես, ո՛վ եմ ես,  
Դե, իհարկե, մարդ բոլորի պես,  
Ով գիտի տանջվել եւ մնալ հեպ:



Հենց այս պահին,  
Տրված ցավին՝  
Երապում ու շատ եմ ուզում,  
Որ ամպրոպի պես որոտամ ե՛ւ ես,  
Եվ ամպերի պես ես էլ անձրեւեմ,  
Կայծեր թափեմ՝ կայծակի պես,  
Վառ արեւի պես՝ շողեր արձակեմ:  
Երապում ու շատ եմ ուզում  
Հենց այս պահին:  
Այս պահից դուրս  
Դեռ չգիտեմ ինչ եմ ուզում:



Ես ծովի պես խելագար  
Ինձ տալիս եմ ափեափ,  
Մե՛րթ տխուր եմ ու անճար,  
Մերթ սրտամեծ՝ ծովի չափ,  
Մե՛րթ ժպտում եմ, մերթ՝ թախծում,  
Բարկանում եմ ինքս ինձ,  
Մե՛րթ ինձ անպարտ եմ կարծում,  
Մե՛րթ՝ տառապում անխնա:  
Մե՛րթ ատում եմ մահը ես,  
Ապրել տենչում շարունակ,  
Մե՛րթ հոգնում եմ կյանքից այս,  
Խենթ է կյանքը, տենչս՝ փակ...



Իմ կրած ցավից ամրացել եմ ես,  
Իմ թմրությունից թարմացել եմ ես,  
Ես արիացել եմ իմ թուլությունից,  
Եվ ջերմացել եմ իմ սառնությունից:  
Իմ կոպտությունից ես մեղմացել եմ,  
Իմ ցածրությունից ես բարձրացել եմ,  
Եվ ազնվացել եմ անազնվությունից  
Այդպես... գտել ինքս ինձ:



Քեզ անշնորհք ձեռով  
Ծալել նետել են  
Մի մութ անկյուն...  
Իսկ ես  
Քո կարիքն այնպե՛ս,  
Այնպես եմ պգում...  
Մի՞թե ես եմ  
Միակ դժբախտը,  
Որ նկատում է  
Քո անցանկալի  
    Բացակայումը,  
Եվ հայտնվելով  
    Թախծի  
Կիսավեր դղյակում՝  
Ինքն իր մեջ  
Մի ամոթխած  
    Ամպ է դառնում...  
Երանի՛ր բոլորը որոնեի՛ն  
Եվ բոլորը գտնեի՛ն քեզ,  
    Վստահություն,  
Քանզի հիմա  
Բոլորին արեւ է հարկավոր,  
    Արեւ՝...



Երբ հայրս՝ բոլոր հայրերի նման  
Պատերազմի դաշտ գնաց ինքնակամ,  
Ես՝ փոքրիկ մանուկ՝ լացը աչքերիս՝  
Հասկացա կլանքի խորհուրդը վերին,  
Եվ միշտ աղոթքով ինդրեցի Աստծուն,  
Որ հայրս կռվից ողջ-առողջ գա տուն,  
Որ չափակասի գլխից գեթ մի մազ,  
Հայրս մեր գլխից մնա անպակաս:  
Եվ ահա մի օր, գնդակին փոհած  
Մի աչքի լույսը, հայրս դարձավ տուն,  
Վիրավոր, բայց ողջ՝ մայրս շնջաց:  
Ու սիրով փարվեց իր հատլթ ամուսնուն:



Անպուսպ ահով  
Մեռավ տողը  
Քո շուրթերին...  
Եվ դու ցավից  
Մեղմեցիր մատներդ...  
Մատներիդ  
Քնքուշ մեղեդին  
Լռվեց սարսավիից...  
Եվ դառնությունդ  
Ստիպեց քեզ`  
Քամուց մոլորված  
Սպիտակ  
Թղթի պես  
Նետվել տեղից տեղ`  
Կորցնելով քո երբեմնի  
Անհոգ տողն ու տեղը...



Լսո՛ւմ ես, այդ ես եմ`  
Միակների մեջ այն միակը,  
Որը հավատում ես  
Հավատարիմ է մնում քեզ,  
Միակների մեջ այն միակը,  
Որը, որպես հայելի,  
Ցույց է տալիս քո իսկական  
Դեմքն ու դիմագիծը,  
Բայց ես այն միակ հայելին,  
Որը թաքցնում է քո արատները`  
Փորձելով վերացնել  
Քո վիշտն ու թախիծը:

Ինչո՞ւ չէ, ես նաեւ  
Այն միակների մեջ միակն եմ,  
Որը քեզ համար  
Ե՛վ ծառա է, ե՛ւ տեր,  
Ե՛վ թշնամի է, ե՛ւ բարեկամ,  
Ե՛վ ջահել է, ե՛ւ ծեր:  
Ես այն եմ, միակների մեջ այն միակը,  
Որը պատրաստ է ամեն ինչ տալ՝  
Անունդ ու պատիվդ վեհ ու բարձր  
Պահելու համար,  
Այո՛, այդ ես եմ միակների մեջ այն միակը,  
Որը, պետք եղած դեպքում,  
Մեղքդ է կծկում, սխալդ շտկում,  
Եվ, անգամ, քեզ քար է դարձնում,  
Միայն թե ցավին անտեղյակ լինես,  
Ու հանգստության հեղինակ լինես,  
Ես, այդ ես եմ,  
Այն միակը միակների մեջ,  
Որը դառնում է պահակ,  
Դառնում թիկնապահ,  
Որ թախիժն հանկարծ քեզ չմոտենա,  
Եվ երբ ի հայտ գա  
Մի այնպիսի նժար՝  
Ծիծաղդ ու թախիժդ կշռելու համար,  
Գոնե այդ ժամանակ  
Ծիծաղդ կկշռի ավելի շատ:  
Եվ, ե՛ւ,  
Վերջապես, ես այն եմ,  
Միակը այն միակների մեջ,  
Որը եւ կռվում, եւ հաշտվում է լուռ ու հեզ  
Ինքն իր հետ, ինքն իր մեջ:



Տղան,  
Սառույցը ձեռքին,  
Կանգ առավ մի պահ՝  
Հայելու առաջ,  
Եվ, ո՛վ պարմանք,  
Տղան չկար,  
Սառույցն էր միայն:



Ես ուզում եմ պարել այնպես,  
Ինչպես պարում են թուփն ու ծառը...  
Ես ուզում եմ ժպտալ այնպես,  
Ինչպես ժպտում են քարն ու սարը...  
Ես ուզում եմ խոսել այնպես,  
Ինչպես խոսում են գետն ու ջուրը...  
Ես ուզում եմ երգել այնպես,  
Ինչպես երգում են սուրն ու հուրը...  
Ես ուզում եմ տիրել այնպես,  
Ինչպես տիրում են սիրտն ու բախտը...  
Ես ուզում եմ փայլել այնպես,  
Ինչպես փայլում են դաշտն ու արտը,  
Երբ ոսկեպօծ գույն են ստանում,  
Ես ուզում եմ՝  
Հենց այ այսպես՝  
Երապել եմ ուզում ես:



Պետք չէ ասել՝  
Թե ով եմ եղել,  
Ով կլինեմ  
մի շաբաթ հետո,  
Եվ ով եմ հիմա:  
Պետք չէ ասել,  
Քանզի,  
Ես՝ ես եմ,  
Մի դար հետո էլ՝  
Ես՝ ես կլինեմ:



Դժվար է,  
Երբ ահի մեջ մահ կա,  
Մահի մեջ՝ ահ:  
Դժվար է,  
Երբ ցավի մեջ դավ կա,  
Դավի մեջ՝ ցավ:  
Դժվար է,  
Երբ լավի մեջ վատ կա,  
Վատի մեջ՝ լավ,  
Դժվար է:



Պահի տակ  
    Ժպիտս ծաղկում է,  
Թռչնում է ժպիտս՝  
Պահի տակ:  
Պահի տակ  
    Սիրտս պուգվում է,  
Դատարկվում է սիրտս՝  
Պահի տակ:  
Պահի տակ  
    Դեմքս խոտում է,  
Համրում է դեմքս՝  
Պահի տակ:  
Պահի տակ  
    Պահը սահում է,  
Պահվում է պահը՝  
Պահի տակ:



Գարո՛ւն, իմ հոգու գարո՛ւն,  
Քո աչքերից լույս է թափվում,  
Իսկ ունքերից՝ մանանա,  
Քո այտերից հույս է ցայտում,  
Իսկ շուրթերից, ո՛վ իմանա,  
Քո խոսքերից մուսաներ են այցի գալիս,  
Իսկ խոհերից՝ տաղիկներ...  
Քո տաք շնչից ծաղկափռոջի է դուրս գալիս,  
Իսկ բերանից՝ ծաղիկներ:  
Քո մատներից ամուր թելեր են ընկնում,  
Իսկ ձեռքերից՝ նվերներ,  
Քո երակներից հավատ ու սեր է ծորում,  
Իսկ վերքերից՝ Ժպիտներ,  
Քո նյարդերից տարածվում է հանգստություն,  
Իսկ մկաններից՝ ուժ ու կորով,  
Քո նապերից՝ կիսվում-կուտակվում է  
առատություն,  
Քո վարսերից՝ փայլ ու գորով,  
Քո վարդերից փափագներ են ի հայտ գալիս,  
Իսկ փափագներից՝ սիրահարներ,  
Քո շողերից՝ ցավը սիրուն ձեռք չի տալիս,  
Եվ թողնում է այն վայելել:  
Գարո՛ւն, իմ հոգու գարո՛ւն,  
Դու հրաշքի գետ ես վարարուն:



Մե՛ր,

Իմ փափագը ձեւ է տալիս քո փափագին,

Իմ հասակը թեւ է տալիս քո հասակին

Եվ վեհանում,

Մե՛ր,

Իմ սիրանքը քո սիրանքին ուժ է տալիս,

Իմ պարծանքը քո պարծանքին դուր է գալիս

Եվ բարձրանում,

Մե՛ր,

Իմ թովչանքը հարս է գալիս քո թովչանքին,

Իմ գգվանքը բույր է տալիս քո գգվանքին

Եվ գոհանում,

Մե՛ր,

Իմ բարձունքը քո բարձունքից դուրս է գալիս,

Իմ հանցանքը քո հանցանքից խույս է տալիս

Եվ քաղցրանում,

Մե՛ր, սե՛ր, սե՛ր:



Նայեցի  
Օրվա վեհացած  
Ու վերացած  
Աչքերի մեջ,  
Ու օրը,  
Լերկ ու անոթի  
Մի համեստությամբ,  
Աչքերը  
Խոնարհեց գետնին:  
Եվ երբ  
Կարեկցանքով,  
Նորից թափանցեցի  
Օրվա աչքերի խորքը,  
Օրը մեռավ  
Իմ աչքերում՝  
Մի բռնադատված  
Կայտառությամբ,  
Ու ես խղճացի  
Ոչ թե նրան,  
Այլ ինքս ինձ:



Սպասիր նայեմ քո աչքերին,  
Գուցե գտնեմ հորինածս...  
Սպասիր նայեմ քո հուշերին,  
Գուցե գտնեմ կորցրածս...  
Սպասիր նայեմ քո խոհերին,  
Գուցե գտնեմ որոնածս...  
Սպասիր նայեմ քո գտածին,  
Գուցե... ի՛նչ,  
Դու վերցրի՛ր իմ գտածը,  
Լավ, մի՛ սպասիր:



Արցա՛խ,  
Քաջ տղաները  
Իրենց տաք արյամբ  
Գրեցին  
Քո հանդեպ տաժամ  
Հավատն ու սերը:  
Արցա՛խ,  
Մայրերը  
Իրենց որդիների երապանքներով  
Երգեցին  
Քո հանդեպ ունեցած  
Հույսն ու սերը:  
Արցա՛խ,  
Որք մանուկները  
Իրենց հայրերի կարոտով  
Զարդարեցին  
Քո հանդեպ տաժամ  
Անվուգական սերը:  
Արցա՛խ,  
Ես քո՝ Վինվորի,  
Մոր ու մանկան  
Միրուց  
Գրեցի իմ այս տողերը,  
Արցա՛խ:



Այսօր  
Աշխարհը շրջվել է ուլուռ,  
Երկինքը՝ խաչվել,  
Գետը ցամաքել է ուլուռ,  
Գետինը՝ հալչել...



Արդյոք,  
Ցա՛վն է մարդու մեջ,  
Թե՛ մարդը սավի,  
Դա՛վն է մարդու մեջ,  
Թե՛ մարդը դավի:  
Արդյոք,  
Մա՛րդն է հողի մեջ,  
Թե՛ հողը մարդու:



Նյարդերը նման են  
Փքված փուչիկի,  
Մի սխալ շարժում՝  
Եվ այն կպայթի:

## ՀԱՅՐԵՆԻՔ

Աչքերիդ մեջ եմ փնտրում աչքերս,  
Այն պարզ աչքերի,  
Որոնց շնորհիվ  
Աչքերս՝ աչքեր,  
Հուշերս հուշեր են մնում:

Մատներիդ մեջ եմ փնտրում մատներս,  
Այն տաա մատների,  
Որոնց շնորհիվ  
Մատներս՝ մատներ,  
Ձեռքերս ձեռքեր են մնում:  
Քայլերիդ մեջ եմ փնտրում քայլերս,  
Այն նուրբ քայլերի,  
Որոնց շնորհիվ  
Քայլերս՝ քայլեր,  
Հետքերս հետքեր են մնում:

Հայացքիդ մեջ եմ փնտրում հայացքս,  
Այն սուրբ հայացքի,  
Որի շնորհիվ  
Հայացքս՝ հայացք,  
Պահվածքս պահվածք է մնում:

Գրկիդ մեջ եմ գիրկս փնտրում,  
Այն փափուկ գրկի,  
Որի շնորհիվ  
Գիրկս՝ ԳԻՐԿ, սիրտս ՄԻՐՏ է մնում:



Զգո՛ւյ՛շ,  
Այստեղ՝ այս հողի վրա  
Կյանքի ու մահվան պայքար է եղել:  
Զգո՛ւյ՛շ,  
Այստեղ՝ այս հողի վրա  
Հողի մշակը ձեռքերն է կորցրել:  
Զգո՛ւյ՛շ,  
Այստեղ՝ այս հողի համար  
Մայրն իր մի՛նու՛ճար որդուն է պոհել:  
Զգո՛ւյ՛շ,  
Այստեղ՝ այս հողի տակ  
Հայրն ու մայրը դեռ չձնված փոքրիկի  
հետ մայր են մտել:  
Զգո՛ւյ՛շ,  
Այստեղ, այս հողի վրա  
Արնաքամ սրտեր կան,  
Որ չեն բուժվի երբեք,  
Զգո՛ւյ՛շ:



Նա սկսեց լացել՝  
Արցունք չկար,  
Փորձեց ժպտալ՝  
Արցունքոտվեցին  
Աչքերը հոգնած,  
Եվ, հանկարծ,  
Արցունքները գլորվեցին  
Գերեզմանոցի  
Ծաղկամանի մեջ  
Ծաղիկն հառաչեց.  
Թվաց՝  
Հողի անասելի խորքից  
Հառաչը լսվեց:



ՀԱՅՐԵՆԻՔ,

Թո՛ւյլ տուր

Թեւերդ իմ թեւերին կայցնեմ,

Որ հեշտ լինի թռչելը,

Թո՛ւյլ տուր

Խոհերդ իմ խոհերի մեջ լցնեմ,

Որ հեշտ լինի ապրելը:

Թո՛ւյլ տուր

Միրտս քո սրտի հետ խմորեմ,

Որ հեշտ լինի սիրելը:

Թո՛ւյլ տուր

Չայնս քո ձայնին խառնեմ,

Որ հեշտ լինի երգելը:

Թո՛ւյլ տուր

Ես քեզ ամուր-ամուր գրկեմ,

Որ հեշտ լինի ձուլվելը:

Թո՛ւյլ տուր, թո՛ւյլ տուր

Մեկ անգամ էլ արտասանեմ,

Չարտասանեմ՝ շնջամ

ՔՈ ԱՆՈՒՆԸ...



Դուք սպասում եք  
Չսպասելու  
Մի սպասումով,  
Եվ կրկնում,  
Որ նա կգա:  
...Ու լսում եք ձայնը նրա՝  
Մի չլսելու  
Լսողությամբ,  
Եվ ասում եք,  
Որ նա եկավ:  
Նրան գրկում  
Համբուրում եք ոտից-գլուխ՝  
Մի չտեսնված  
Չտեսությամբ.  
Իսկ նա չկա՛:



Ես անկարող եմ  
Անտարբեր նայել  
Այն տղաներին,  
Որոնք նայում են  
Առանց աչքերի.  
Նրանց աչքերը  
Խոսքեր են թերի:  
Այն տղաներին,  
Որոնք բռնում են  
առանց ձեռքերի.  
Նրանց ձեռքերը  
Սերն է անթերի:  
Այն տղաներին,  
Որոնք քայլում են  
առանց ոտքերի.  
Նրանց ոտքերը  
Կամքն է ահռելի:  
Ես անկարող եմ  
Անտարբեր նայել  
այդ տղաների  
Լուրթ հայացքներին,  
Ուր սեպագրված են.  
«Երանի՛ մենք էլ... երանի՛»:



Կյա՛նք,  
Այսուհետ անցնելով  
Քո փշերի վրայով՝  
Չեմ վախենա  
Ահասարսուռ քո կերպարից,  
Ու չեմ ճչա՝  
Արնաթաթախ իմ ոտքերի  
Դաժան ջավից,  
Դեռ ավելին՝  
Քո փշերի վրայով  
Ես կվապեմ ոտաբոբի՛կ:



Մի բաժակ ծիծաղ  
Թող դեմքիդ ցանեմ,  
Որ կարգին ծիծաղես...  
Չէ՛, չէ՛  
Քիչ կլինի՛ կքմծիծաղես,  
Կամ էլ՝ կեղծ ծիծաղից  
Կծամածռես  
Բերան ու երես,  
Լավ է երկու բաժակ  
Ավելին լցնեմ,  
Թող անկեղծ ծիծաղից  
Լա՛վ արցունքոտվես:



Գե՛տ, դու այսքան ճոխ  
Լեզու ունես,  
Այնինչ, ասում են, թե՛  
Ֆշշում ես, գե՛տ:  
Դու այսքան վեհ  
Քայլեր ունես,  
Այնինչ, ասում են, թե՛  
Սողում ես, գե՛տ:  
Գե՛տ, դու այսքան գունեղ  
Նապել գիտես,  
Այնինչ, ասում են, թե՛  
Ալեկոծվում ես, գետ:  
Գե՛տ, դու այսքան խենթ  
Խորհել գիտես,  
Այնինչ, ասում են, թե՛  
Ուղեղ չունես:  
Գե՛տ, ասում են, թե...  
Կարեւոր չէ՛  
Ի՛նչ են ասում,  
Գետ մնալն է կարեւորը:



Եթե, նույնիսկ,  
Հեռուներից  
Քեզ գուրգուրող  
Իմ աչքերին  
Այցելեիր  
Երեւելի ժամանակով:  
Եթե, նույնիսկ,  
Քեզ որոնող,  
Ու միշտ սպասող  
Սիրտս  
Քո անսահման թեւերի  
մեջ գուրգուրեիր,  
Երջանկություն,  
Գուցե,  
Դարձյալ դժգոհեի:



Զգացե՛լ ես, երբեւէ,  
Թե խտուն ինչպես է  
Իր անպարփակ հեպոլթյամբ,  
Քո ոտքերի ծանրության տակ,  
Ցավ՛ն ու վիշտը մոռացած,  
Անդուլ, անդադար  
Աղոթք անում քեզ համար:  
Զգացե՛լ ես...  
Դու, ա՛յ դու,  
Որ տրորում ես խտուր փարթամ,  
Չասելով անգամ կներես:  
Զգացե՛լ ես,  
Փորձիր պգալ:



Խառնաշփոթ է,  
Ինչպես իմ գլխում,  
Այնպես էլ՝  
Իմ մեծ սենյակում.  
Եվ ինչ ի՞նչ է պետք՝  
Մի մեծ գրադարան՝  
Խոսուն գրքերով,  
Մի փոքրիկ սեղան՝  
Թղթի կույտերով,  
Եվ նաեւ, նաեւ  
Զսպված լռություն...  
Լռություն:



Արե՛ւ, ինչ քո դողը դարձրու,  
Ինչ քո շողը հագցրու, արե՛ւ:



Գարո՛ւն,  
Ժպիտդ դեմքիս կայրու  
Ու հետո գնա,  
Իսկ, երբ հետ գաս դու,  
Ժպիտդ կվերադարձնեմ,  
Գուցե արդեն գտած իմը...



Ես է՛լ լացելու ցանկություն չունեմ,  
Եթե ունենամ,  
Դող արցունքներս

Ինձ կալեկոծեն:

Ես է՛լ խորհելու ցանկություն չունեմ,  
Եթե ունենամ՝  
Տանջող խոհերս

Ինձ կքարկոծեն:



Արդյոք ես կամ,  
Թե իմ փոխարեն,  
Երապեն՛րս են՝  
Երջանկության համը  
Համտեսելու պատրաստ...  
Երջանկությունս  
Երապներում է,  
Երապներումս է  
Շարունակությունս:



Քո հոգում կորած  
Ծաղիկը խռով  
Կգտնես մի օր,  
Տեղից կհանես,  
Կսեղմես կրծքիդ,  
Եվ կուրախանա՛ս.  
Իսկ հիմա անցիր,  
Այն նույն ուղիով,  
Որով անցել է  
Ծաղիկը խռով:



Որոշեցի՝  
Հենց այս պահից  
Ախն ու վախը  
Ջնջում եմ  
Իմ գործածվող բառարանից,  
Եվ չհիշված,  
Բայց հիշելու միշտ արժանի  
Խրթին լեզվիս,  
Անշահավետ  
Ու շահավետ  
Կերպարներիս ու դերերիս  
Վերջ եմ տալիս:



Կյանքիս շրջանակներում  
Ամեն ինչ  
Այն չէ,  
Ինչ ես եմ ուզում,  
Այստեղ ես շատ եմ նման  
Այն օտարականին,  
Որը ոչ թե  
Շրջապատի լեզուն չգիտի,  
Այլ խոսելաձեն՝  
Անհասկանալի:  
Այստեղ ես ինքս ինձ  
Շատ մոտ, բայց շատ աղոտ եմ,  
Ծանոթ, տեղ-տեղ էլ խորթ եմ:  
Կյանքիս շրջանակներում  
Ես ո՛չ թե կյանքոտ,  
Այլ երապոտ եմ,  
Քանպի կյանքիս շրջանակները  
Շատ համառոտ են:



Ուպում եմ լացել,  
Բայց ծիծաղում եմ,  
Ուպում եմ բացվել,  
Բայց կողպեքվում եմ,  
Ուպում եմ անցնել,  
Բայց կանգնում եմ՝  
Բնավ չզգալով  
Ներկայությունս...

Ուպում եմ գոչել,  
Բայց շշնջում եմ,  
Ուպում եմ կորչել,  
Բայց գտնվում եմ,  
Ուպում եմ մեռնել,  
Բայց շնչո՛ւմ եմ՝  
Բնավ չզգալով  
Շնչառությունս...

Ուպում եմ ապրել,  
Բայց...  
Կյանքն էլ,  
Կարծես թե,  
Հենց այդ «բայց»-ում է:



Ես խենթանում եմ  
Քո ճեփ-ճերմակ  
Հանգստությունից,  
Քո անկրկնելի  
Ձեւավորումից,  
Քո խոնարհումից,  
Ձյո՛ւն, ես խենթանում եմ  
Քո խենթությունից...

❖  
Հիմա ծառը բերք է տալիս  
Առանց ծաղկելու,  
Ծաղիկը բուրում է  
Առանց բացվելու:

❖  
Ես դեռ ապրում եմ  
Երապներով  
Ու երապներում՝  
Երապելով  
Այն, ինչը  
Լինում է միայն  
Երապում,  
Ե՛րբ եմ վարթնելու...

❖  
**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒՆ**  
Բազմահնար, բազմաքնար,  
Ամենաբառ, ամենավառ  
Իր տողերով, իր տաղերով  
Քայլում է նա  
Կյանքի վրա,  
Քայլում անահ,  
Քայլում անմահ  
Դարերի մեջ ապրում է նա՝  
Հրաշաթույր, հրաշաբույր,  
Գեղագանգուր, գեղահամբույր,  
Իր խաղերով,  
Իր տաղերով:

❖  
Վիրավոր ծաղիկ,  
Զուր մի՛ արտասովոր,  
Անքուն արցունքից  
Վերքդ չի բուժվի:  
Սգավոր ծաղիկ,  
Կեղծ մի՛ ծիծաղիր,  
Կեղծված ծիծաղից  
Սիրտդ չի բուժվի:

❖  
Քուն թե արթուն,  
Կյանքիս համար  
Կյանք եմ որսում  
Եվ անդադրում,  
Իրականն ու իսկականը  
Թողած դրսում,  
Անիրական ու  
Հորինված  
Կյանք եմ ուզում:

❖  
Լինում են պահեր,  
Երբ թվում է, թե,  
Ինչքան հեռանում,  
Այնքան դուրին է  
Հասնելը դառնում,  
Եվ լինում են պահեր,  
Երբ թվում է, թե,  
Հասել ես արդեն,  
Այնինչ՝ չես էլ մոտեցել:



Հափշտակված  
Առաջ գնալու  
Մոլուցքով նանիր՝  
Դու քեզ կորցրիր  
Այն նույն կանգառում,  
Որում գտնում են,  
Ոչ թե կորցնում:



Երապներդ լցրել ես  
Այն մի փունջ  
Կիսաբայ ծաղիկների մեջ  
Եվ հոտ քաշելով՝  
Վերցրել  
Նրանց համն ու հոտը...  
Ծաղիկները թառամել են,  
Համն ու հոտը  
Անձայն անցել...  
Քեզ լոկ մնացել էր  
Ծաղկեփնջի ստվերը,  
Այն էլ՝  
Նետել ես աղբամանը՝  
Չհասկանալով,  
Որ նրա մեջ էր  
Քո ամբողջ կյանքը:



Հայելուց նայող,  
Կյանքից հոգնած,  
Ամպակալած  
Այս դեմքը  
Չտեսնելու համար՝  
Հայելին շրջում եմ...  
Ամպրոպ սկսվեց,  
Երեւի կարկուտ է գալու...



Դու մեկ այտերիս ես թափվում՝  
Դիմափոշու պես,  
Մեկ շրթներիս պես՝  
Շուրթերիս ներկվում,  
Մեկ բիբերիս ես գծվում  
Դիմափոշու պես,  
Մեկ՝ ծալքերի պես  
Ճակատիս թառում,  
Մեկ՝ գլխիս ես դրվում՝  
Ոսկե թագի պես,  
Մեկ էլ՝ ամբողջը բերում,  
Թափում ես գլխիս,  
Եվ միանգամից,  
Գունափոխում ինձ,  
Իմ անբաժան,  
Իմ անարժան,  
Համեստություն:



Ժամանակ,  
Կանգնիր եւ ասա,  
Թե որտեղ հասանք,  
Թե ինչով մտանք,  
Եվ թե ինչ գտանք...  
Կանգնիր եւ ասա,  
Թե մի շաբաթ առաջ,  
Մի շաբաթ հետո,  
Թե բոլորից առաջ,  
Բոլորից հետո.  
Ի՞նչ տարբերություն...  
Կանգնիր եւ ասա,  
Թե բեմ, ծավեր,  
Գեղեցիկ խոսքեր.  
Ի՞նչ առավելություն՝  
Չեղածի ու անցողիկի մեջ...  
Ժամանակ,  
Կանգնիր եւ ասա՛,  
Թե ասելու ինչ որ բան ունես:



Նկարն,  
Իր նկար լինելու մասին  
Մոռացած,  
Լեզու, ձեռքեր, ոտքեր առել՝  
Պատմում է  
Երջանկության  
Լինելության  
Մանրամասները.  
Պատմում է այնքան  
Վարակիչ,  
Որ խուլերն էլ լսում են  
Ոչ միայն նրա շուրթերի շարժումները,  
Այլև նրա հնչող, շնչող, երապող ձայնը:



Ապրածս կյանքը.  
Ինքս ինձ թեւանցուկ արած  
Անցել եմ այն նույն փողոցով,  
Որով առաջին անգամ  
Սովորել եմ ճանապարհ հարթել  
Դեպի այս բացահայտումը...  
Ես մինչեւ այսօր  
Ոչինչ չեմ կորցրել,  
Գտե՛լ, գտել եմ մի քանի անգամ.  
Վստահե՛լ,  
...Վստահել եմ, բայց  
Չեմ հասցրել միամտության,  
Հավատացել եմ,  
Բայց, միմիայն  
Եղելությանը՝  
Աչքովս տեսած,  
Ատե՛լ, ոչ, ներել, ներել եմ,  
Ներում եմ եւ մինչեւ հիմա,  
Եվ չեմ ավատում՝  
Մեկ-մեկ:



Պատե՛ր, պատե՛ր...  
Օդ, լույս չեն թափանցում  
Այս պատերից ներս...  
Փորձում ես ճշալ,  
Ձայնդ չի լսվում  
Լուկ արձագանքդ է  
Քեզ խլացնում:  
...Չես շնչում,  
Բայց տեսնում ես, լսում...  
Պատերն են խոսում,  
Քայլում, երազում,  
Պատերը`  
Քեզ շրջապատած...  
Պատերը` ...  
Քեզ հավասարված:



Այն պոհերը,  
Որ մատուցում են  
Աչքերդ լուրթ...  
Այն աղոթքները,  
Որ շնչում են  
Շուրթերդ լուռ...  
Այն խաչերը,  
Որ ննջում են  
Ձեռքերիդ մեջ...  
Չեն թողնի  
Հավերժ քուն մտնի  
Հավատդ արթուն:



Աչքերից փախչող  
Այս երկու կաթիլ ծիծաղում  
Պարզ երեւում է  
Նրա էության  
Պղտորությունը...  
Ցայգալույսը  
Փոխվել է գիշերվա,  
Էլ ցերեկ չկա,  
Մութ է ու սշուշ...  
Խղճի դռները փակ են,  
Հավատի ափսեն  
Դատարկ է, անհուշ:  
Ճահճի միջից  
Դուրս գալու համար  
Ուժ է պետք,  
Կարգին ուժ...



Ես ինչ-որ բան եմ  
Ինչ-որ տեղ թողել,  
Ու չգիտեմ՝ ինչ  
... Չգիտեմ.  
Բայց, կարծես, պզում եմ՝  
Ինչ-որ բան  
Մի տեսակ այն չէ:



Թվում է՝ ամեն ինչ ունեմ...  
Եվ չունեմ ոչինչ...  
Թվում է՝  
Իմ բախտը իմ ձեռքերում է...  
Բայց ձեռքերս իմը չեն...



Ես ոչինչ չեմ պգում...  
Եվ հենց այս  
Անմիտ պահին  
Մեկը նշմարում է  
Առաջին կնճիռը դեմքի,  
Մեկը՝ վերջին...  
Մեկը գտնում է  
Առաջին ճերմակը գլխի  
Մեկը՝ վերջին...  
Մեկը պգում է  
Սրտի առաջին ցավը,  
Մեկը՝ վերջին...  
Մեկը նյութում է  
Առաջին դավը,  
Մեկը՝ վերջին...  
Ահա հենց այս  
Անմիտ պահին  
Մեկը կորցնում է  
Վաստակած առաջին դիրքը,  
Մեկը՝ վերջին...  
Մեկը մոռանում է  
Առաջին վեհ միտքը,  
Մեկը՝ վերջին...  
Մեկն համոտեսում է  
Կարոտն առաջին,  
Մեկը՝ վերջին...  
Մեկն անտեսում է  
Զգացումն առաջին,  
Մեկը՝ վերջին,  
Մեկը նետում է  
Առաջին քարը,  
Մեկը՝ վերջին,

Մեկն արտաբերում է  
Առաջին բառը,  
Մեկը՝ վերջին...  
Եվ հենց այս  
Անմիտ պահին  
Առաջինն ու վերջինը  
Իրար են խառնվում,  
Եվ տնօրինվում՝  
Ծիծաղախառն լացի  
Ու լացախառն ծիծաղի կողմից:  
Իսկ ես հենց այս  
Անմիտ պահին  
Եվ ոչինչ չեմ պզում,  
Եվ պզում եմ ամեն ինչ:



Ես ա՛սող...  
Ո՛չ,  
Ես մտնում եմ  
Աստղի մեջ,  
Տեղավորվում եմ  
Լուսնի ներսում,  
Ես արեւի ներսն եմ  
Խցկվում՝  
Չբացահայտված  
Առեղծվածները  
Բացահայտելու,  
Այնինչ՝  
Նրանք վաղուց են  
Ի՛նչ մեջ, իմ ներսում...  
Եվ բնավ  
Չեն գունաթափվում  
Առեղծվածները:

ԱԼԻՍԱ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ



ԹԻԹԵՆՈՍԽԱՆԱՂ

*Մարդը ծնվում՝ հայտնվում է  
վանդակում...  
Եվ քանի մեծանում ...  
Վանդակն այնքան ավելի է  
նեղանում:*



Աչքերիցս ընկած արցունքների մեջ  
Ռիթեռներ են՝ թռչելու պատրաստ.  
Օրը պահ է, կյանքը՝ թիթեռախաղ...



Ջահելվում... տարիքվում.  
Էլի անհագ ես մնում, հասակ,  
Ծաղրվում... պատռվում.  
Էլի անպարտ ես մնում, դիմակ,  
Վերանաղվում... վերընթեռնվում.  
Էլի անհայտ ես մնում, կյանք:



Ծաղիկները նման են մարդկանց  
Ավելի, քան բնության  
որեւէ հայտնագործություն.  
Այն մեկ բացվելիս է լավ երեւում,  
Մեկ՝ թռչնելիս...



Երջանկությունը այնքանով է շոշափելի,  
Որքանով մեծ է մեր երեւակայության չափանիշը,  
Խիղճն այնքանով է գործածելի,  
Որքանով բարություն ասվածը  
իրագործվելու ճանապարհին է,  
Գեղեցիկն այնքանով է գեղեցիկ,  
Որքանով մեր աչքերն ունակ են բացահայտելու...  
Բացահայտելու եւ բացահայտվելու  
ճանապարհ է կյանքը:

❖  
Ես, մանուկ դարձած,  
Հրաշք թիթեռի հետեւից  
վապում եմ անդարձ՝  
Մտնում նրա մեջ... եւ արդեն թիթեռ  
Ապրում եմ նրա ակնթարթային կրանքը՝  
անհոգ ու թեթեւ...  
Ես՝ մանուկ թիթեռ,  
Դեպի կապույտն եմ ճախրում,  
դեպի արեւը անմեռ...

### ԵՍ ԱՆՁՐԵՎ ԵՄ

Անձրեւ,  
Ես նայում եմ քո աչքերին,  
Ինչպես որ դու՝  
Քո մանրակաթիլ շուկներով,  
Որոնք իմ շուրթերին մանրակերտվել,  
Իմն են դառել,  
Էլ ավելի, քան երբեւէ:  
Անձրեւ,  
Ես աչքերս տալիս եմ քեզ՝  
Ետ վերցնում արդեն քեզնով,  
Քեզ պես՝ անձրեւահունչ, անձրեւատես...  
Եվ չեմ տեսնում շուրջս ոչինչ,  
Բացի քո մեղմահոս,  
մեղմաշուկ կաթիլներից:

❖  
Թափվիր, անձրե՛ւ, թափվիր,  
Որ արցունքներս  
Արցունքներիդ խառնվելով՝ չերեւան...

❖  
Թափվիր, անձրեւ,  
Միայն թե ոչ անձրեւելու համար:

❖  
Անձրեւ, թափվիր,  
Ես սիրտ եմ բացում  
Իմ ու քո լացում...

.....  
Քո վերքն արդեն շատ երկարեց  
Եվ նայելը էլ ավելի դժվարացավ,  
Վերջ տուր երգել.  
Չորացել են արցունքները աչքերիս:  
.....  
Չդադարող անձրեւելդ  
Ես հասկացա...

❖  
Ես անձրեւ եմ... եւ թափվում եմ  
պատուհանի՛ն անձանոթի՛  
Նկարելով ինչ-որ մի դեմք,  
Որը, գուցե, հետագայում  
Նրա սրտում նույն անձրեւը կնկարի  
(Աստված չանի...),  
Արտավելա շատ երկարեց  
Եվ խոսելը էլ ավելի դժվարացավ:



Աստվածներ կան,  
Բայց ոչ երկնքում,  
այլ երկրի վրա.

Ամեն լուսաբայ,  
Ամեն մայրամուտ  
Ծնվում են նրանք,  
Ծնվում... մահանում,  
Բայց, չեն մեռնում,  
հաստատ...

Ծնվում են.

Եւ մահից առաջ,  
Եւ մահից հետո...

Ծնվում՝ ապրելու համար,  
Քանպի մահ չկա.

Կա հավերժություն՝  
Վաղուց, շատ վաղուց  
Ծնված...

Եվ ապրում է դեռ,

ապրում է, հաստատ:

Եվ կրանքն է աստված...

Եվ մահը...

Աստվածներ կան

Եւ երկնքում...

Եւ երկրի վրա...

❖  
Եվ նա է աստված,  
Ով հավատում է  
աստծու գոյությանը...  
Եվ աստված է նա,  
Ով գիտի, որ աստված չկա.  
Կա լուկ մարդկային  
մի համակերպում,  
մի քաղցր սոսկում,  
Որից ծնվում են,  
Բայց չեն մեռնում,  
հաստատ,  
Ես հավատում եմ  
քո չմեռնելուն...



Շնչում եմ չհասկացված լինելու օդն  
Ու բավարարվում  
Հենց այնպես քաղելուց...  
Այլեւս չկա լավ ու վատ.  
Կա սովորականը,  
Որն ինձ շնչահեղձ է անում...  
Եվ ես պզում եմ,  
Թե ինչպես է ծանրանում  
Անկշիռ ու անպարփակ  
տարածությունը,  
Ինչպես է ծերանում  
դեռ չծնված հավատը:  
Կորցնում եմ շնչառությունս,  
Զգալով, որ ծիծաղը  
քարանում է շուրթերիս...  
Եվ շուրթերս ու ծիծաղս  
դադարում են իմը լինել.  
Որքա՛ն կարճատեւ է ուրախությունը  
ուրախ լինելու համար...  
Այլեւս ոչինչ ոչնչի նման չէ:  
Տխրությունն եմ հոգեթով շնչում.  
Կարծես այն սկսել է ինձ դուր գալ,  
Ինչպես սովորական դարձած ամեն ինչ:



Փողոցում կանգնած ծաղկավաճառի  
Ծաղիկների մեջ

թափանցում կամայ...

Եվ անցորդների փալուղ դիմախաղերի  
սուլանքները ողջ

Ամբողջապես իմն եմ դարձնում՝

Ծաղկի մեջ մտած ու ծաղկի հետ գտած  
այն մթնոլորտը,

Որից ծաղիկը ծաղիկ է մնում:



Ես ծաղրածուի հագուկապ չունեմ,

Բայց շատ եմ ուզում,

Որ կարողանամ աշխարհի

բոլոր ծաղրածուներին

Իմ հագուկապում փնտրել ու գտնել,

Այն համոզվածությամբ,

Որ կհայտնվեմ, առաջին անգամ,

Ամենաանկեղծ մթնոլորտի մեջ:



Ճշմարտությունն ամենօրյա  
սխալ օգտագործումից  
գունաթափվել է...  
Որտե՞ղ են իմ աչքերը.  
Ես այլեւս չեմ ուզում  
նրանց կորցնել...  
Փողոցը ծիծաղում է  
սեփական անճաշակությունից:  
Վերջ տուր, հեռավորություն,  
Քո էժանագին ինքնագոհությանը,  
Այն այլեւս չի ծափահարվում,  
Հեռուն ինձ այլեւս չի կարող ձգել...  
Ես շոշափում եմ ունայնությունն  
ամենօրյա,  
Որը կլանում է ինձ...  
Հավատի մեջ դատարկ եմ...  
Անհավատ եմ, այո...  
Հնարավոր չէ ասել՝  
ինչ է լինելու վաղը,  
Քանի դեռ վաղը չէ...  
Երկու մերժված ճշմարտությունը  
Հավասար է մեկ համաձայնության,  
Գրկիր ինձ եւ օգնիր հավատալ,  
Այլապես՝ կորած եմ...



Սպասումը, ինքն իրեն գրկած,  
Քանդակվել է հերթերի անշարժության մեջ...  
Երջանկությունը կայանում է  
ապրելու հնարավորությամբ,  
Մնացածն անցողիկ է.  
Թե՛ ցավ, թե՛ ուրախություն:  
Կյանքն ամենամեծ հրաշքն է.  
(Իսկ մարդիկ այն վերածել են չգիտես ինչի...)  
ՀՐԱՇՔԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է...  
Այսօր ոչ մեկն արքա չէ. արքաներ են բոլորը:





Զգացմունքներս ի մի հավաքելու վախն  
առեցի մեծ է եւ հասկանալի...  
Ակաման ծիծաղով է պարուրվում,  
Հուշավորումը անցյալի թարմացումն է,  
ներկայի կերտումը:  
Ես սարսափելի եմ տանում անհաշտությունը...  
Կասկածներս ու կակիծներս՝ խորթ առերեսվում են  
Դժվար հասկացվող ու չհասկացվող  
ճանապարհներին:  
Անկեղծությունը երբեք չի փոխում գույնը...  
եւ ես տխուր եմ...  
Կյանքը օրերսներ չի սահմանում  
Եվ պատժողն ենք մենք եւ պատժվողը:  
Ճիշտ է այն, ինչ լավ է, սակայն ամեն լավ ճիշտ չէ...  
Միրելս այնքան ձգձգվեց, որ սերը լոկ մնաց  
բառի մեջ.  
Միրո մասին ավելին չեմ կարող ասել:  
Ծիծաղս քարացել է հիշողությանս շուրթերին...  
Երբ բառերը դադարեն լոկ բառեր լինել,  
եւ կգտնեմ քեզ...  
Ժամանակը սպասել է տալիս, բայց չի սպասում:



Որ չեմ կարող չսպասել.  
Ի՞նչ են խաբում, թե ես եմ խաբողը...  
Մապերս ապատ եմ արձակում`  
Քամու սերենադայի հնչյուններում  
գտնելու համար:  
Կյանք, որքանո՞վ ենք պատրաստ  
քեզ բացահայտելու...  
Եվ որքանո՞վ ես դու պատրաստ բացահայտվելու...  
Ինչ ոչ - որ չի հասկանում...  
Ես չեմ հասկանում ոչ որի  
Եվ կայանում է հասկանալու  
պարադոքսալ իմաստի բանաձեւումը:



Սերն ամեն ինչ... եւ ոչինչ է...  
Եվ սիրով են ապրում, եւ առանց սիրո,  
Եվ սիրուց տառապում, եւ չսիրելուց...  
Երեւակայությունս քարացել է հիշողությանս  
լուսանցքներում.  
Բավականին ուշացավ իմ ու քո հանդիպումը,  
Սպասումը եւս վերջ ունի,  
Վերջ, բայց ոչ ավարտ...



Սերը գեղեցիկի ձգտումն է,  
Իսկ հասնումը՝ սիրախախտումը...  
Բոլորս էլ ինչ - որ տեղ ինչ - որ չափով  
Սիրախախտում ու սիրախախտվում ենք`  
Չիմանալով իսկ...



Հետոն միշտ էլ համբանում է,  
Երբ վերջնական խոսք ասելու հերթը  
իրեն է հասնում...

Ներկան հետո չէ, հետո չէ անցյալը,  
Ապագան է միշտ հետոյի դերում,  
Բայց այն էլ մի օր ներկա ու անցյալ է դառնում...  
Եվ հետոն էլի կախվում է անհայտությունից:



Ատելու համար նախ սիրել է պետք,  
Միրելու համար՝ նախ՝ ապրել...  
Երջանիկ երեւակայությանս թեւերն  
այնքան երկար են,  
Որ վախենում եմ աղավաղել  
ողջ պատկերավորությունը...  
Ամեն ինչ իր տեղն ու ժամանակն ունի,  
Բսկ ես փորձում եմ խախտել  
այդ բնականոն օրենսդրությունը...  
Ես, իրոք, հավատում եմ վերին ուժի  
եւ ճակատագրի գոյությանը...  
Մի անգամ մայրս ասաց,  
որ, եթե իր առաջնեկ աղջիկը  
ծնված լիներ, ես չէի լինի,  
Ուրեմն՝ ես չէի կարող չծնվել,  
որովհետեւ եթե-ն ներկան է...  
Թեւերս մեկնեցի, որպեսզի բռնեմ  
երջանկությունը.

Աղավաղվեց ակնթարթը...  
Ապրելու համար նախ սիրել է պետք,  
Միրելու համար՝ նախ ապրել:



Թռիչքի է նման իմ այս քուն - անքնությունը...  
Սպասումս գրկվել է  
տաք ու քաղցր գրկախառնումով...  
Խոսքերս հավում եւ միանում են շնչառությանս.  
Ապատ արձակեք ապատությունս...  
Ես ականատեսում եմ բառերի ծանրացումը  
ներշնչանքներիս վրա.  
Զգում մեղադրանքներ, որոնք անէանում են  
շնչառությանս ջերմությունից.  
Բավական է տարալուծվել  
Եվ չզգալ սեփական ծավալի անհունությունը...  
Թղթերը սեղանիս վրա տձեւել են՝  
շարվածքի մեջ  
Անտարբերության պահվածքի ներսում...  
Գրքերը հերթ են կանգնել՝  
Զգիտեմ ում սպասելուն տրամադրված...  
Պետք չէ իմ առաջ պահանջներ դնել.  
Ես ցանկությանս ուղեցուցյով եմ շարժվում:  
Վխտում է սովորականված  
անտրամադրությունս...  
Վարագույրված թիթեռները  
թեւում են սենյակիս մեջ...  
Ծաղիկների բույրը  
տարածվել է շնչառությանս գույներում...  
Հագուստներս գունափոխվել են  
տարածության մեջ...



## ԱՅՍՕՐ ԹԵՐԵՎՍ ԱՅՍՔԱՆԸ

Երազը նման է չգրված բանաստեղծության,  
Որը գրվելու դեպքում էլ  
այնպես չի հնչի,  
ինչպես երեւակայվում է...  
Զգում եմ, որ տարածությունը  
քողարկում է սեփական  
անպորությունը...  
Աշխարհը մի հրաշալի երաժշտություն է,  
Որին հասնելով՝ քունն են դառնում  
բոլոր հեռավորություններն ու սահմանները...  
Այլեւս չի երեւում այն հնչյունը,  
Որն ինչ - որ չափով  
կարող է փրկվել չափազանցումից...  
Դառնությունը մտերմանում է հիշողությանս  
Եվ խոսքը կորցնում է իր կարողությունը:  
Կյանքը գրականության հետ  
հեռագրկումով է տարված,  
Քանի դեռ ունկնդրողը  
բնությունն է  
եւ մարդու երեւակայությունը...  
Նա, ով ստեղծել է այս ամենը,  
հավանաբար վախենում է նայել  
Եվ դժվար թե այսուհետ կարողանա...  
Թիթեռը վրկվել է իր գունագեղումից,  
Երազը կամայ - կամայ  
կորցնում է իր հրապուրանքը...  
Հավատը քարանում է  
երազվելու ճանապարհին...  
Չափազանցումը գրավել է

չափազանցված տարածքներ.  
Այլեւս՝ իրականությունն է  
իւր անհասցե տրամադրությամբ՝  
թե երազների մեջ,  
թե երազներից դուրս:



Մոլորակը, որտեղ ես եմ ապրում,  
այլեւս երկիրը չէ...  
Անունը, որով ինձ են դիմում, այլեւս իմը չէ.  
Ես մոռացել եմ իմ անվանատառերը...  
Հայելու մեջ երևում է այն ցավը,  
Որը մնացել է տարիների հավերժությունից.  
Որքա՛ն հեռուներ եմ ոտնատակ տվել,  
Բայց ոչ մի տեղ չեմ հասել...  
Կանչերը շրջանցել են լսողությունս...  
Ինձ մնացել է լոկ արձագանքն  
այն պատմության,  
Որն իմ այս մատներով եմ վերջակետել.  
Երկու կետ... եւ այլեւս չեմ պզում  
ցավի մեծությունը...  
Այսօր թերեւս այսքանը:



Եթե իմանայինք՝ ինչ է լինելու վաղը,  
Երեւի թե վաղը չէր լինի...  
Փորձարկում եմ թեւերիս երկարությունը.  
Այնքան էլ մեծ չեղավ թռիչքս:  
Երանի այնպիսի ձնեմարդ պատրաստեի,  
Որը թռչելով հասներ իր ապագային,  
Թեեւ հետդարձը չեմ կարող չերաշխավորել.  
Վերջնական անդարձություն չկա:



Ցուրտը կարող է սառեցնել,  
Բայց չի կարող մեռցնել վերջնականապես...  
Ձյունն փաթիլ, շրջվիր եւ ասա,  
Թե որտեղ են հավատիս նմուշները...  
Հողը կորցրել է իր հավերժի հանգստությունը...  
Մազերս, գիտակցելով իրենց անհաճո  
անշարժությունը,  
Հաճոյանում են քամու մեղեդիներին...  
Գնացքը շարժվում.  
Մնում է փոշին՝ հեւացող քամու հետ...  
Այսօր թերեւս այսքանը:



Հերթական անցորդ, հերթական երազ,  
Հերթական կարոտ, հերթական կասկած...  
Օրը քայլում է օրվա հետեւից՝ զգաստ վիճակում...  
Ամեն ինչ հասկանալը հավասար է ոչինչ  
չհասկանալուն:  
Անուն, որը երբեք անհուն չի դառնա...  
Նոր տարին գալիս է՝  
ոգին թողած հիմալայներում,  
Կամ ով գիտի էլ ուր...  
Շոկոլադե ձմեռապապը հալչում է  
մանկան ձեռափում...  
Հավատն արտասուքվել է. քրքիջից երեւի թե...  
Ոչ - ոք չի հավատում հրաշքի,  
բայց սպասում են բոլորը.  
Գուցե եւ անգիտակից.  
բոլորը սպասում են չսպասելուն:  
Անցորդները շտապում են,  
բայց չգիտեն ուր են հասնելու,

Եվ որն է իմաստն այդ հասնումի...  
Դեմքերի հանդիպում...  
    հայացքների փոխանակում... եւ վերջ.  
Այդպես միշտ եւ ամենքի հետ:  
Երպաներ, սպասումներ,  
Կասկածներ, կսկիծներ... եւ ոչինչ.  
Ամեն ինչ ավարտելը հավասար է ոչինչ չսկսե-  
լուն:  
Նոր տարի է գալիս, բայց ոչինչ նոր չէ.  
Ամեն ինչ հինն է նորի մեջ...  
Օրը վապում է օրվա հետեւից, տարին՝ տարու...  
Անցորդները նորից շտապում են.  
    եւ ուշանում՝ ոչ մի տեղից...

Աքաղաղը նորից իր անունն է տալիս  
    շան առջեւից. ծուղրուղու՛...  
Նույն սկսումները,  
    նույն դեմքերը՝ նույն մտքերի...  
    եւ ոչինչ, ոչինչ՛...

Ոչինչը հավասար է ամեն ինչի:  
Փոքրիկը հրճվում է՝ ուտելով իր շոկոլադե  
    ձմեռապապին.

Համենայնդեպս ուրախ է...  
ՇՈԿՈԼԱԴԵ ՆՈՐ ՏԱՐԻ...



Միրո փակագիծը միշտ էլ մնում է փակ,  
 Քանպի սերը բազմակետովում է փակագծերի մեջ.  
 Ավելին գրված չէ ո՛չ կյանքի, ո՛չ մահվան էջե-  
 րում...

Խոսքերը մնում են ընդամենը խոսքեր.  
 Ավելին չի ասում ոչ մի սիրո շարունակություն,  
 Քանպի սերը մեկ բառ է.

ավելին ձեռական է, անընդունելի:

Չափում եմ սիրո սահմաններն  
 ու հայտնվում անհայտության մեջ.

Մերը տարածության գրավականն է:

Հիշողությունս մերկանում է.

Ես երբեւէ չեմ սիրել,

բայց միշտ սիրահարված եմ...

Մերը ճաշակված անճաշակելիք է:

Զգում եմ, որ վերափոխվում եմ.

Բազմակետերը շարունակում են ինձ...

Եվ ես սկսվում եմ բազմակետերից...



Որքա՛ն բան ենք կորցնում

ամեն ժամ ամեն տեղ

Փողոցում, տանը, հեռուստացույցի առաջ,

Համակարգչի մկնիկի հետ, աշխատանքում,

Հագուստների վրա... Եւ վերջապես,

անգործության մեջ...

Որքա՛ն ժամանակ ենք կորցնում...

Եւ որքան՝ կյանք...

Մանկության մեջ կարգին չենք մանկանում,

Չենք ջահելվում կարգին ջահելության մեջ,

Ծերության մեջ կարգին չեն ծերանում...  
Եվ վերջապես,  
Աշխարհում քանի՛ տոկոս է  
կապում նրանց թիվը,  
Ուրբեր այնպիսինն են դառնում,  
Ինչպիսին ուզում են տեսնել ուրիշները,  
բայց ոչ իրենք...  
Եվ ում են պետք ապատության մասին  
Գոռ - գոռ առասպելներն ու հեքիաթները,  
Երբ ոտքատակ ենք տալիս  
այդ փառաբանվող ապատությունը  
Եվ ոչի՛նչ... կույր ու խուլ են բոլորը՝  
աշխարհը, ծառերը, մարդիկ...  
Ամենուր՝ Հայաստանում, Ռուսաստանում,  
ԱՄՆ - ում  
Ինչ - ինչ տարբերությամբ,  
բայց իմաստով նույնը...



Ի՛նչ եմ տվել կյանքին, որ ինչ պահանջեմ.  
Ծնվել եմ փաստացի 1985 - ին,  
Իսկ թե ինձ մնա,  
Կասեմ՝ ծնվել եմ, երբ թվեր չկային...  
Եվ ապրում եմ դեռ առանց թվապայքարի,  
Ապրում եմ առանց սահմանադրության.  
Ազա՛տ, ինչպես...  
համեմատելու ոչ մի բան չկա...  
Չեմ հավատում, բայց դժվար պահերին  
Վառվող մոմերի երեւակայությամբ  
աղոթք եմ անում՝  
Աստվածահաճո տողեր ձոնելով.  
անհավատ հավատ:

Եվ ով կարող է համոզված ասել,  
Թե այն, ինչը հաղթանակ ենք անվանում,  
Հաղթանակ է իրոք եւ ոչ պարտություն:  
Քամին տանում է հայացքս...  
Եվ շշուկներն են տարածվում քամու...  
Ես դեռ քնած եմ,  
Թեեւ, արդեն անհնարին է տարբերակել`  
Որտեղ է քունը, որտեղ` անքնությունը.  
Քառսվել է ամեն ինչ...



Ինչպես կանգ առնել մի տեղ,  
Ուր օտարության ցավն է ծանրանում դեմքիդ,  
Հիշողությանդ մեջ...  
Բայց ես կանգնում եմ... ինչ արած,  
Ուրիշ տեղի համար իմ ոտքերը չեն երկարում...  
Ջուրը սառել է հենց նոր լվացած երեսիս վրա...  
Կան ժպիտներ, որոնք իմը չեն,  
Բայց իմ դեմքին են պատկերվում  
երբե՛մն, հաճախ, շարունակ...  
Ես ընկնում - ելնում, ելնում - ընկնում եմ...  
Մինչեւ երբ կտեւի իմ այս ընկնել - ելնելը.  
(Օրորում եմ գլուխս),  
Իսկ հոգու խորքում աղոթում, որ այն չերկարի,  
Այլապես հավատիս չնչին կաթիլն էլ կչորանա`  
Այլեւս ոչնչի չհավատալուս պատճառով... մեղք եմ:



Պատուհանի հայելու վրա  
Ճանճն իր երաժշտական  
նոր մեղեդին է ներկայացնում.  
Գնահատող չկա...  
Ծառի ճյուղին կանգնած՝  
Ծիտն իր կյանքի վերելքն է նկարագրում.  
Ն կ ա տ ո ղ չկա...  
Դաշնամուրի առաջ նստած երգահանը  
Հասկանում է, որ ամենախսկական երգը  
Ինքը՝ բնությունն է...  
Ծառը համեստորեն օրորում է գլուխը.  
Երեւի անցած - գնացածն է մտաբերում,  
հեռացումի անմխիթար տխրությունը.  
Լսող չկա...  
Ոչ մեկը ոչ մեկին չի հասկանում...  
Կամ չի ուզում հասկանալ...  
Ի վերջո, չհասկանալն ավելի հեշտ է,  
Քան գլուխ ջարդել՝  
հասկանալու ջանքերի վրա:  
Հարբեցողն օրորվող ծառի տակ  
իբր արբունքի մեջ գրկել է հողը...  
Օղին բռնագրավել է ծառի հեպությունը.  
Տեսնող չկա...  
Երբեմն անուշադրությունը  
շահել է տալիս իրավիճակին,  
Երբեմն էլ... ընդհակառակը...



Ես կարծես կորցնում եմ այն,  
Ինչը նույնիսկ իմը չէր...  
Կյանքում մենք նայում ենք այնտեղ,  
Ուր պետք չէ,  
Ձգտում ենք նրան, ինչին դժվար թե  
Հասնելն հեշտ լիներ,  
Քանպի այն, ինչին ձգտում ենք,  
Ընդամենը ձգտում է, ոչ ավելին...  
Ամեն մի սկսում մի նոր պայքար է,  
Մի նոր ընկալում. բացառիկ,  
Բայց եւ կրկնվող հաղթահարումով...  
Ես կարծես վերագտնում եմ այն,  
Ինչը նույնիսկ չեմ կորցրել:



Մահ տենչացողն անտեղյակ է կյանքի տենչից,  
Այն առավել հպոր է.  
Կյանքը միշտ էլ հաղթում է մահին...  
Դրախտը լավ չէ, քանի դեռ ծանոթ չես դժոխքին...  
Հաճախ վերջն ավելին է, քան՝ անվերջությունը:



Սարդն իր նոր կտավն էր փորձում ավարտել,  
Երբ տանտիրուհին մի ձեռքի շարժումով  
Վերջ տվեց այդ արվեստագործությանը՝  
Դժգոհելով՝ ամեն անգամ

նույն տեղը մաքրելու համար:

Երեխան նորածին թիթեռին  
Մի ամբողջ օր վազվզեցնելուց հետո  
Բարկությանմբ տրորեց նրա ապատությունը:  
Ճանճն իր երաժշտական

նոր համարի դեբյուտն էր անում,  
Երբ տղամարդը հայհոյելով լռեցրեց նրան.  
Ճանճն էր մեղավորը՝

իր ճանճ լինելու համար...



Սահմանապատում եմ անսահմանապատ  
տարածքներն  
Ու թափանցում անհատակ անուղակիության  
ներսը՝  
Փորձելով ուղղակիորեն մտցնել այնտեղ  
իմ չնախատեսված բարեփոխումը...  
Մոտենում եմ անսահման սահմաններին,  
Ուրվագծում անուն, ապգանուն մակագրությունը...  
Մտքերս ժողովելու խնդիրն էլ անլուծելի եմ  
թողնում.  
Բացթողումներն ավելի ուշագրավ են,  
քան չափապուրկ լրացումները...  
Անհունը ցանում եմ ճանապարհիդ  
եւ ճանապարհին առնում գրկիս մեջ.  
Երկու լուռ շշուկ են միանում,  
Լիանում են երկու պահ - անհուն...  
Բացում եմ... բացվում...  
եւ դարձյալ անբացահայտ եմ մնում...  
Չեմ կարող սսել, թե ինչ գույն ունի մերժումն  
իսկական,  
Չեմ կարող, թե՛ չեմ ուզում...  
Հուշերս անտուն թափառում են օտարության մեջ.  
Դեմքը դիմակ է դառնում, դիմակը՝ դեմք...

❖  
 Հուշերս հեռացող մտքի շարունակության նման  
 մոտենում են ինձ...  
 Հին ցավը նորին դիմանալ է տալիս.  
 Այնքան տխրություն եւ խինդ  
 կա այս ցավի ներսում,  
 Այնքա՛ն սպասելիք եւ այնքա՛ն անկում...  
 Առանց ինձ ներկա լինելս շատ է դժվար.  
 Ես որտեղ գնում եմ, այնտեղ չեմ լինում...  
 Այնտեղ եմ լինում, որտեղ չեմ գնում...  
 Ներկան չապրելով՝ անցյալն էլ մնում է չապրված...  
 Սպասել չի նշանակում թողնել ամեն ինչ  
 Եվ անփորձ ու անգործ տրվել սպասելուն,  
 Թեեւ ամեն տեսակի սպասելն էլ  
 Կյանքի կեսն է խլում, խլում է անդորրը հոգու...  
 Խոստումներ տալու փոխարեն լռում եմ.  
 Դժվար է խոսել մի բանի մասին,  
 Որն անհայտ է, անսպասելի...  
 Ձեռքերս մեկնում եմ՝ գրկելու այն պարպությունը,  
 Որն ինձ թույլ կտա պարպ ապրելու ձեռը սովորել...  
 Առաջին հայացքն, այնուամենայնիվ,  
 ամենաճիշտ կարծիքի արտահայտումն է,  
 Երկրորդ - երրորդը, գրեթե միշտ՝  
 առաջինի արտացոլանքը:  
 Փորձը հաճախ փորձանք է դառնում,  
 Փորձանքը՝ հաճախ փորձ:  
 Երկինքն ինձ ամեն անգամ  
 անակնկալ է խոստանում,  
 Երբ հայացքս մեկնում եմ նրան,  
 Բայց անակնկալն ուշանում է...  
 Ես հավատում եմ չհավատարուս...  
 Միտքս կորցնելով իրեն՝ գտնվում է...  
 Հուշերս հեռացող մտքի շարունակության նման  
 հեռանում են ինձանից...

❖  
Ես չափազանց երջանիկ էի՝  
Երջանկության իսկական դեմքը  
տեսնելու համար,  
Իսկ հիմա՝ չափազանց դժբախտ:

❖  
Ամենքս էլ, ինչ-որ չափով,  
մուրացկաններ ենք...  
Հանրության բավմաչքերում  
Փող չենք մուրում,  
չենք մուրում հայ...  
Մենք կյանք ենք մուրում,  
Մերթ՝ հույս ու հավատ,  
Մենք կամք ենք մուրում,  
Մերթ՝ լույս անարատ...  
Մենք՝ կոկիկ հագուկապի մեջ,  
Կիրթ շարժուձեւերով...  
մուրացկաններ ենք:

❖  
Մերը հողովվում է հենց այն ժամանակ,  
Երբ կուրանում են,  
Իսկ իմ աչքերը բաց են շարունակ.  
Աչքերը հոգու արտացոլանքն են:  
Խոսակցին ճանաչելու համար  
Պետք են ոչ միայն ականջներ,  
Այլև տեսնող աչքեր.  
Ամենակարեւորը միշտ էլ  
մնում է թաքնված:  
Բառը աշխարհ է.  
Աշխարհը սիրելու համար  
Պետք է բառի արժեքն իմանալ:  
Գաղտնիքը բացվում է,  
Երբ նրա փակ մնալը չափազանցվում է.  
Չափն իմացողն էլ  
կողպեքի կարիք չի պահ...  
Հարգանքը չեն պարտադրում՝  
ԱՐԺԱՆԱՆՈՒՄ են,  
Իսկ քանի դեռ նախանձը կա.  
Ի՞նչ հարգանքի մասին է խոսքը:

❖  
Մերն, ինչ-որ տեղ, հնարանք է,  
Որի տակ թաքնվելով՝  
Ցույց տալիս եւ արդարացնում ենք  
Մեր անկարողությունն  
ու անպաշտպանվածության  
պզայողությունը:





Օտարությունը ես ինքս եմ արդեն...  
Այն ինչ մերը չէ, միշտ լավ է թվում,  
Իսկ այ մեր լավը մենք չենք գնահատում...  
Իմ օրենքները ինքս եմ սահմանում,  
Ինքս էլ խախտում...  
Ասում ես՝ գիտեմ,  
Այդ դեպքում ո՞րն է քո չիմանալը...  
Կան բաներ կյանքում,  
Որ պետք է հիշել՝ չմոռանալու համար,  
Եվ բաներ կան,  
Որ մոռանալ է պետք՝ չհիշելու համար:  
Այսօր ես կտրականապես  
    հրաժարվում եմ իմ բոլոր հույսերից...  
Հասկանալով, որ կլինի այն, ինչ պիտի լինի...  
Եվ այն դռները, որ պիտի բացվեն,  
    կբացվեն առանց հարցումի,  
Իսկ փակվածները՝ փակ կմնան հավերժ:









Ինձ շատ հեռուն տար, երազ,  
Ես հեռուներին ծանոթ չեմ այնքան,  
Բայց ցանկություն կա.  
Ցանկությունն այնքանով է իրականալի,  
Որքանով անիրական է...  
Մարդն ուզում է հասնել իր սովերին...  
Աստված կա այնքանով, որքանով չկա...  
Ինձ հարվածում են բոլոր կողմերից,  
Չսպասված, անգամ՝ դուրս պատկերացումից...  
Ինչունենին ապշել՝ մնացել են լուռ,  
առանց հարցումի,  
Խոսքերը նույնն են, խոսողներն են տարբեր...  
Մի բացված գիրք,  
Որը կարող է մնալ անընթեռնելի...  
Չգիտեմ՝ ինչ եմ գրելու  
Եվ ինչ է փոխելու իմ այս գրածը,  
Բայց չեմ կարող լռել,  
Չգրել... չեմ կարող...  
Ինչ- որ բան խանգարում է գրչիս  
կենտրոնացմանը.  
...Անհասկանալի ցավ...  
Տե՛ր իմ, տե՛ր, որ չկաս,  
Գեթ մեկ անգամ եղիր  
Եվ թեկուզ իմ չգիտեմ-ների  
Ճիշտ պատասխանն ասա.  
Անպատասխան լինելուս համար  
Ես առավել շատ եմ տառապում...  
Տեր իմ, տեր, որ չկաս,  
Գեթ մեկ անգամ,  
Թեկուզ երազիս լուսատու պատուհաններից  
ինձ բարեւումիդ երգն ասա,  
Գեթ մեկ անգամ այն բավաթիվ անգամներից,  
Որոնց իմ կուրորեն հավատով եմ լիապիսնել  
մի ժամանակ...



Ամեն օր օրը մեռնում  
Եվ հարություն է առնում ամեն օր:  
Ամեն օր ես կորցնում  
Եվ գտնում եմ ամեն օր...  
Լույսերի մեջ՝ լույսեր,  
Հույսերի մեջ՝ հույսեր...  
Ես հասնում եմ տունն Աստծու:  
Ամեն օր Աստծու տունը հասնում  
Եվ հետ եմ գալիս ամեն օր...  
Ամեն օր Աստված տանը չէ.  
Աստված տանը չէ եւ ոչ մի օր...  
Ամեն օր հավատս հանգչում է...  
Բռնկվում է հավատս ամեն օր...  
Ես ամեն օր աշխարհ եմ գալիս...  
Եվ գնում եմ աշխարհից ամեն օր...



Ամեն պահ, ամեն տեղ, ամեն մեկս  
Այնքան բան ենք ասում,  
Բայց չասված բաներ էլի մնում են,  
Ավելի շատ, քան՝ ասվածները...  
Գուցե մի օր գրիչը վերցնեմ  
Եվ գրեմ սեր անունով հրաշքի մասին՝  
Կոշիկներիցս մինչեւ  
մազերիս ամրակալը սիրահարված...  
Այսօր, չէ, օրն ավարտված է,  
Վաղը. ահա հույսերի ու հույսերի անակնկալը...  
Մենք ձգտում ենք անսահմանություն.  
Խորանում՝ սահմանների մեջ,  
Փարվիր ինձ, ճշմարտություն, եթե իրոք կաս,

Այս պահին աստվածային գորովանքի  
պահանջ եմ պզում,  
Թեկուպ հավաստմանն այդ առեղծվածի...  
Հոգնել եմ՝ հենց այնպես իմ գնալ - գալուց...  
Թեթեւություն, քո մեջ առ հոգնած թեւերս  
Եվ բուժիր մատներիս ճշացող ցավը...  
Երաժշտությունն արդեն պատրաստ է  
Եվ գտնված են բառերը.  
Երգիչը հրաժարվում է սակայն,  
Երգն այնպես կատարել, ինչպես գրված է,  
Ձայնի խպությունը պատճառաբանելով...  
Փոքրիկը շտապում է մեծանալ,  
Չգիտի, որ մեծ լինելն այնքան էլ լավ չէ...  
Նա երապանքները պզուշորեն  
տեղավորում է գրպանի մեջ  
Եվ անհամակերպումով  
կերտում իր մանկությունը...  
Երապանքներս գունաթափվել են  
աստիճանների վրա,  
Փաթաթվի՛ր ինձ, անճշմարտություն,  
Այս պահին աստվածային գուրգուրանքի  
պահանջ եմ պզում...



Ապրելը պայքար է՝  
Տանջանքի հասնող չափապանցությամբ...  
Դժոխք ու դրախտ խառնվում են իրար.  
տարաբերակելը դառնում է դժվար...  
Ծրագրե՛ր, հույսե՛ր... եւ հիասթափություն,  
Արցունքնե՛ր, ծիծաղ... եւ անավարտություն...  
Աշխարհում ոչինչ ու ոչ - ոք  
ամբողջապես չի կայանում.  
Կիսատ է կյանքը, կիսատ է մարդը  
իւր պայտուկությամբ,  
Կիսա՛տ, անավա՛րտ...



Քայլում եմ՝ գտնելով, սովերն իմ  
պատերին, ասֆալտի վրա՝  
Մերթ այնքան փոքրիկ, մերթ այնքան հսկա.  
Ուզում եմ ձեռք տալ, մոտենալ նրան.  
Մեկ հետ եմ գնում, մեկ՝ առաջ գալիս...  
Պահմտոցի եմ խաղում,  
Բայց այս անգամ եւ բռնողն եմ ես,  
Եվ՝ թաքնվողը...



Ասֆալտամայթը ճաքճքում է  
չոր ու ցամաք հայաչքներից...  
Ճեմացող հայաչք եմ տարածում...  
Եվ իմ անտեղյակ հեղինակությամբ  
Դառնում ականատեսը մի նոր ճախրանքի.  
Որքա՛ն երկար է թռիչքս, երապ...





Ես արեւի տակ գրում եմ չգրելու բաներ,  
Բայց այնքան լավ է արելը,  
Որ սարսափում եմ հեռանալ...  
Եվ ես գրում եմ արեւի ու ինձ համար.  
Ի՞նչ հաճելի ջերմություն կա իմ ու քո միջեւ.  
Տարածությունը կորցնելու վախ կա իմ մեջ,  
Հեռավորությունը կործանված տեսնելու  
ահասարատու վախ...

Ներիր ինձ,

Ես այնքան հեռու եմ՝

քեզ մոտ լինելու համար.

Ես տարածություն եմ անսահմանության մեջ...

Պոկվելս ցավոտ է,

Ինչպես այն տերեւը,

Որը տերեւաթափի ցավով է պարպված...

Ծարավ եմ... արեւի, լույսի, հեռավորության,

Ներիր, ես անվերժանելիորեն հեռու եմ

Քեզանից, ինձանից... բոլորից հեռու եմ...



Ես փորձում եմ հասկանալ քեզ, իսկ դու...  
Ինչու քեզ չհասկանալս չերկարեց այնքան,  
Որ հեշտ լիներ համակերպվելը  
Թե ինձ, թե քեզ հետ, ճակատագիր,  
Ցույց տուր մատներիս երկարությունը...  
Եվ ասա՝ որտեղից որտեղ կարող եմ ձգվել  
Համբերությանս մատուցները մերկ...  
Անոթի՛ եմ դեռ...  
Ինչ ուզում եք՝ ասեք,  
Բայց ոչ մեկը ոչ մեկի բարեկամը չէ...  
Ցավը, մարդու մեջ՝ մարդուն

սպանում է ինչ - որ չափով:

Անհուններ կան, որոնց բացառությունը ինքս եմ...  
Ես ուզում եմ այն, ինչն ուրիշները չեն ուզում,  
Քանզի գիտեն, որ չի լինի,  
Ես բացառում եմ անբացառելին.  
Ես չեմ ապրում ապրելու համար,  
Միրելու համար չեմ սիրում...  
Ես բռնում եմ պատկերացումն անպատկերացման  
Եվ դարձնում հավատն անավարտություն...  
Սկիզբը ոչ մի տեղից չի սկսվում.  
Ոչ մի տեղ չի ավարտվում վերջը...  
Ինչ ուզում եք՝ ասեք,  
Բայց մարդկությունը գալիս է հավերժությունից  
Եվ գնում դեպի հավերժություն...



Ժամանակը տարածություն է,  
Մարդը՝ բնակիչ՝ ժամանակավոր  
կամ հարժամանակյա...  
Պատերը պատնեշներ են.  
Անսահմանության սահմանափակում...  
Խոսքերն՝ արարքն՝ արդարացնելու միջոց,  
Երավելը՝ իրականությունից  
փախուստ տալու գործընթաց,  
Պարզ ու արեւոտ եղանակը  
Ամառային տրամադրության ապահովումն է,  
Ոչ միշտ, օգնում է համենայնդեպս...  
Ամեն ինչ ունենալու մոլուցքը հավասար է  
Ոչինչ չունեցողի մուրացկանությանը...  
Լույսը խավարի մեջ ապրողի համար է հրաշք:



Կյանքը հեքիաթից  
տարբերվում է նրանով,  
Որ հեքիաթը մարդու երեւակայությունն է,  
Իսկ կյանքը՝ Աստծու...



Օրը ծեծվելուց՝  
Կապտուկներից ցավն է ընկալում...  
Ես մեծացել եմ.  
Երապիսաբումին չեմ տրվում արդեն:



Մահը կյանքի շարունակությունն է,  
Կյանքը՝ անմահության...

Ես Աստուծուց մահ խնդրեցի.  
Կյանք տվեց Աստված...

Ուժեղ ձեռքերը երկար թեւերից  
Արդյունավետ են ու գործնական:



Աշխարհը մեծ է, մարդը՝ փոքր,  
Մարդու նպատակն է, սակայն,  
Աշխարհը ձեռքերում հավաքել - պահելը.  
Թե ինչ է ստացվում,  
Աշխարհն է էլի ականատեսը...



Խիղճ.

Այն երկարակրունկ կոշիկի նման  
Հագցնում ենք մեր ոտքերին,

Որ բոբիկ չերեւանք

Եվ չվնասենք

մեր իսկ բերանով ասած

«Իմիջ» կոչվածը...

Խիղճը կոստյումների հետ

Համահունչելով՝ փողկապում ենք

Ու լրջություն խաղում

ջենտլիմենտ դարձած...

Այն պայուսակի պես

Կախում թեւերից,

Նորաձեւության վերջին ճիչ իբրեւ՝

Ցույց տալու հնարավորությունը

Բայ չթողնելու մտազարությամբ...

Խի՛ղճ...

Ներեցեք, բայց այդ անունով

Խանութներ չկան...



Տրորում եմ հենց նոր իմ իսկ  
Մտահաղայմամբ արտաբերած  
Վճռական ու վերջնական նախադասությունը...  
Անվավեր հայտարարում հենց նոր`  
Իմ իսկ ձեռքսեղմամբ կայացած  
կարեւորագույն որոշումը...  
Ձեռում եմ հենց նոր` իմ իսկ  
ոտքերով դրոշմված հետքերը,  
Որոնց ուղղությունը, ձենն ու տարողությունը  
Նպատակակետի վրա են...  
Հայթայթում եմ հենց նոր`  
Իմ անխնա ջանքերով ձեռքբերված  
Տենչերիս երթեւեկման տոմսը...  
Եվ... պատռում այն...



Գաժան չեն ծնվում՝ դառնում են...  
Պատմություն գրողը  
Ե՛վ սկիզբը գիտի, ե՛ւ ավարտը.  
Ուրեմն մենք չենք մեր պատմության  
ստեղծագործողը...  
Մերկությունը կարող է եւ  
հանդերձի վերելից երեւալ.  
Հագուստն օգտագործում են  
մերկությունը ծածկելու  
կամ ցույց տալու համար...  
Տարիների շատ թվաքանակը  
Ստիպում է ակամայից հետ նայել՝  
Բմանալու համար, թե ինչ է արվել,  
ինչ տրվել, ինչ վերցրվել...  
Արդարությանը չեն արժանանում՝  
Հասնում են...  
Նա, ով գիտի թե ինչ է տառապանքը,  
Գիտի նաեւ՝ ինչ արժե երջանկությունը...





Ռձվոււմ է՝ կյանքս ինձ հետ ոչ մի կապ չունի.  
Անցնոււմ է կողքովս՝ առանց որեւէ ասելիքի...  
Ես էլ, տարվաժ երապի անհուն աչքերից  
փաթիլվող կարելիութամբ,  
Անուշադրութան եմ մատնոււմ իրականը,  
Այն ինձ իմ քայլերից է բաժանոււմ՝  
Օգտվելով կյանքաստովերիս  
պարզամտութունից...  
Որտե՛ղ են իմ ձգտումների  
անգղային հպոր թեւերը.  
Նրանք անհունի անհայտութան մեջ ջարդվում...  
Եվ մնում են անորոշութան շուրթերի վրա,  
Ես չեմ շտապում երապներիս հրաժեշտ տալ.  
Դեռ շուրթերիս վրա կյանքաբույր չեմ պզում:



Փոխվեմ,  
Բայց ինչպես ինձ ինձանից պոկեմ  
Ու նետեմ մի տեղ, ուր չկան  
Նման՝ դեմքով, հայացքով նաեւ...  
Ուր չկան քայլեր իմ քայլերի պես,  
Ուր չկան պահեր, ուր չկան ահեր  
Իմ պահերի, իմ ահերի պես...  
Ուր ինձ չի պատկանում եւ ոչ մի բույս...  
Փոխվե՛մ,  
Այդ դեպքում ես պետք է փոխեմ  
Երակներիս պարունակությունը.  
Եվ արտագաղթեմ՝ ներգաղթի մասին  
Մոռացած հավերժ...  
Փոխվե՛մ, բայց ինչպես,  
Եթե ես՝ ես չեմ լինելու.  
Ինքս ինձ նման, ինքս ինձ համար  
...Եվ ինքս ինձ հետ...



Ինչ է կյանքը, որ մեզ է տրվում  
Մեզանից առաջ արդեն որոշված  
Պատմություններով.  
Մեկին վեպ...  
Մեկին՝ առասպել...  
Մեկին՝ հեքիաթ...  
Մեկին՝ նովել...  
Մեկին էլ...  
Իսկ, եթե ես գերադասում եմ  
Բ ա ն ա ս տ ե ղ ծ ու թ յու ն...





Աչքերով աչքերի մեջ  
 կարելի է մտքեր գտնել,  
 Որը չի հասկանա նույնիսկ  
 աչքերի տերը:



Ամենաանկեղծ հանդիպումը չսպասվածն է,  
 Ամենախիսկական ձեռքսեղմումը՝ պատահականը,  
 Ամենամեծ երջանկությունը  
 չնախատեսվածն է,  
 Ամենաճիշտ դիտողությունը՝  
 բարկությամբ ասվածը,  
 Ամենախիսկական դերը չխաղացվածն է,  
 Ամենաանկեղծ խաղը՝ երեխայությունը...



Հեռացումը վերադարձ է ակնկալում...  
 Մոռացումը՝ հիշեցում...  
 Դերասանը բեմի վրա  
 ծափեր է ակնկալում...  
 Ծափեր չկան. քնած է հանդիսատեսը...



Օրը սեղմվել, կծկվել է անկողնու մեջ  
 Եվ ուզում է իր չունեցած վերմակի տեղն  
 ինձնով ծածկվել...  
 Ես էլ նույն դիրքի մեջ  
 Նույն մտահոգությամբ ուզում եմ ելնել...



Ես ինձ հանդիպեցի տան ճանապարհին.  
Գրկախառնվեցի... եւ տուն տարա ինձ...



Աղջիկը հապիվ էր հասցնում  
արցունքները դեմքից ապատել...  
Ինչքան էլ վատ. վատից վատ էլ է լինում...  
Չեմ քարկոծում.  
Աշխարհում ամեն ինչ փոփոխական է,  
Եթե սիրտը կույր լիներ,  
Ոչ թե վշտի մեջ, այլ վշտի առաջ,  
Գուցե ինչ - որ բան փոխվեր՝ չլիներ այսպես...  
Չսխալվե՞լ.  
Կամքի ուժը ոչ թե չսխալվելու,  
այլ սխալն ուղղելու մեջ է...  
Բաց դռները ոչ միշտ են հյուրընկալում...  
Աղջիկն իր երազափնջով մոտեցավ դռանը...  
Հավարավոր տարիներ անցան...  
Իսկ նա դեռ կանգնած էր դռան շեմին,  
Եթե բախտը լիներ մարդու ձեռքին...  
Եվ ոչ թե մարդը՝ բախտի,  
Գուցե ինչ - որ բան փոխվեր՝ չլիներ այսպես...  
Բացատիկ է այն, ինչը գոյություն չունի.  
Ինչու այսօր Հիսուս չի ծնվում...  
Եթե Աստված մարդուն արարեր...  
Եվ ոչ թե մարդը՝ Աստծուն,  
Գուցե ինչ-որ բան փոխվեր. չլիներ այսպես...  
Աղջկա գրկի երազափունջը  
թռչնել էր վաղուց...  
Աշխարհում ամեն ինչ  
սովորության հետ է կապված.

Եթե մարդը կարողանար զգայմունքներն  
իր ուզածի պես քանդակել,

Գուցե...

Գուցե եւ՝ էլ ավելի վատ լիներ...

Սովորում եմ համակերպվել իրողությանը.

Թարմ երազափունջս անմահության

բույրով է շնչում:



Հոգուս թախիժն արտայտվում է աչքերիս մեջ՝  
Փխանցվում մապերիս.

Ափսո՛ս, այս տարի մապերս սեւով եմ ներկել...



Աղքատի ամենօրյա հայր՝

Աղբամանը նետված

Ճանթված արդարությունն է...



Մերկ են փողոցները,

Այնքան, որ մերկ են թվում, նաեւ քայլերս,

Իսկ ես գնում եմ խելամիտ մի ճանապարհով.

Ոչ վնասել եմ ուզում, ոչ՝ վնասվել,

Բայց մերկություն կա նույնիսկ

Այդ խելամիտ ցանկության մեջ...

Եվ ես կարմրում եմ...

Մեղք են փողոցները...



Ես իրականությունից փախուստ եմ տալիս՝  
Կանգնելով իրականության ուղիղ դիմացը...  
Կյանքում հենց այնպես ոչինչ չի լինում...  
Ցավոտ մտքերը հեռուն չեն տանում.  
Կյանքն արցունք է,  
Եթե ուզում ենք, որ արցունք լինի,  
Հրճվանք է կյանքը,  
Եթե ուզում ենք, որ հրճվանք լինի...  
Եվակիությունը օրվա նախատիպն է...  
Հեռանալս ձգտում է, բայց ոչ նպատակ.  
Անցյալը թող անցյալում մնա,  
Ներկան՝ ներկայում:  
Իմ կյանքում նոր էջեր չկան...  
Խոսքս նոր էջի փնտրումն է.  
Եվակիությունը գտնում եմ  
բավականության մեջ  
Եվ հասկանում, որ ճշմարտությունը  
Գոյություն չունեցող դեմք է,  
Որին փնտրում են բոլորը...  
Եվ ամեն մեկը գտնում է  
իր ճշմարտությունը.  
Որքա՛ն անարդար են  
ճշմարտությունները...  
Արցունքներս հայտնաբերում եմ  
կյանքի հայացքի մեջ.  
Մեղավո՞ր եմ...



Մի դառնահամ թախիժ  
Տիրել է մտքիս շարունակությանը.  
Իմ ներսում նորից  
Տխրության ծովն է ալիքահարում...  
Ժպտում են մարդիկ... ծիծաղում անգամ...  
Ես լուռ եմ սակայն, լուռ եմ ու տխուր.  
Եվ մենությունն է ապաստանում ինձ...  
Եվ մենակ եմ ես...  
Եվ մենակ ես դու, իմ մենակություն:



Մի ծաղիկ տեսա՝ թերթերը թափված,  
Ասացին՝ կոկոն է դեռ չբացված...  
Մի ծառ տեսա՝ կանաչ, բերքառատ,  
Ասացին՝ չոր է՝ կտրելու պատրաստ...  
Մի թռչուն տեսա. երգում էր անձայն,  
Սոխակի ձայն է, -  
Արձագանքեցին մի քանի բամբ ձայն,-  
Երգիչ կդառնա:



Ես չեմ ուզում լինել թիթեռ.  
Մեկ օրվա կյանքը չափից դուրս  
Կարճ է ու անթեւ...  
Չեմ ուզում լինել գարուն կամ՝ ձմեռ.  
Տարին ունի չորս եղանակ,  
Առանց մեկի մյուսը երկար չի դիմանա...  
Ծառ էլ չեմ ուզում լինել.  
Փայտի պակաս կա՝ կարող են կտրել...  
Չեմ ուզում լինել հայելի նաեւ,  
Ճշմարտությունը ցույց տալու համար  
Կարող են ջարդել,  
Իսկ ջարդված հայելին,  
Բոլորս էլ գիտենք, որ վատ նշան է...  
Ասող էլ չեմ ուզում լինել.  
Ցերեկ չեմ տեսնի, ես էլ գիշերասեր չեմ:  
Չեմ ուզում լինել լուսին,  
Կամ էլ, ասենք թե, արեւ...  
Ես ծննդով մարդ եմ.  
Եվ իմ ուզածն է՝ ապրել մարդավայել...



Ես նորից մտնում եմ պերճաշուք  
 շրջապզեստի մեջ՝  
 Անտեսելով իմ իսկական ես-ի ցանկությունը,  
 Մազերիս տալիս մի սանրվածք,  
 Որը հակասում է տրամադրությանս,  
 Բայց դա է քաղաքակիրթ երեւալու  
 նախապայմանը,  
 Շապարում եմ դեմքս նոր ու թանկարժեք  
 երանգներով՝  
 Կորցնելով դեմքիս իրանկարը...  
 Վերցնում պայուսակ,  
 ուր հապիվ թաշկինակ է տեղավորվում,  
 Սակայն խիստ ժամանակակից է եւ ընդունելի...  
 Ոտքերիս հագցնում եմ երկարակրունկ  
 կոշիկներ...  
 Եվ ստիպում դիմանալ  
 Մինչ ավարտն այդ ամենօրյա կրկեսախաղի...  
 Ոչինչ այլեւս ձեւականությունից այն կողմ  
 չի անցնում,  
 Նույնիսկ ձեւականության դեմ պայքարը:



Այն, ինչը երեկ խեղաթուրում էր.  
 Այսօր մերկ ճշմարտություն է,  
 Այն, ինչը այսօր մեծ ուրախություն է.  
 Խոր վշտաբեկում կլինի վաղը...  
 Օրը պետք է ապրել  
 օրվա սահմաններում,  
 Զգացմունքները՝ պգացմունքների...



Ասում ես՝ կյանքն հավերժությունն է,  
Իսկ հավերժությունը մի կյանք տեղում է.  
Կյանքը երկար է, այդ մենք ենք,  
Որ անտարբերությամբ  
կանգնում կանգառում.  
Վերջում ենք միայն կյանքի բույրն առնում...  
Կյանքն հավերժություն է.  
Հավերժվելու ձեռք պետք է իմանալ...



Աչքերս շնչահեղձվում են  
քո աչքերի տարածքներում...  
Ուզում են դուրս գալ.  
Անսահմանության պահանջ եմ պզում,  
Ձեռքերս շնչահատվում են  
քո ձեռքերի սահմաններում...  
Ուզում են դուրս գալ.  
Էլ ոչ մի տարածք ես չեմ ընդունում:



Ծնվում... բնակվում ես մի տեղ,  
Մի ժամանակ՝  
Մեկ ուրիշ տեղի,  
Մեկ ուրիշ ժամանակի  
Երազանքով անհագ...  
Ապրում ես մի կյանք...  
Խաղում ես մի դեր՝  
Մեկ ուրիշ կյանքի,  
Մեկ ուրիշ դերի համար  
պայքարով համառ...  
Այդպիսինն ենք մենք՝ ես, դու, նա...  
Այն, ինչ չունենք,  
Այնտեղ, ուր չկանք,  
Տենչում՝ եւ համարում ենք ամենա...  
Մեր ունեցածի մասին մոռացած:



Կեղծ խոնարհումների, կեղծ ծափերի ներքո  
Դու բեմ ես մտնում՝ անկեղծ հանդերձով...  
Եվ սկսվում է ողբերգությունը...



Կյանքն էլ մեկ-մեկ հանգիստ է առնում՝  
Անշարժանալով միեւնույն տեղում,  
Այնինչ՝ մեր իսկ հորինած  
Ժամ ու ժամանակն այլ են համոզում...  
Մարդ արարածն այնքան պատնեշներ է  
ստեղծել ինքն իր համար,  
Այնինչ՝ միշտ բախտին ենք մեղսակրծում.  
Ճակատագրի՞ քմծիծաղ,  
Թե՛ մարդ արարածի...  
Որքանով ենք մենք անկեղծ  
Մեր խոսքերի մեջ, մեր ժպիտներում,  
Մեր սիրելու մեջ,  
Ի վերջո՞ մեր ատել - դատելում...  
Որքանով ապատ...  
Եվ որքանով պատրաստ ապատ լինելուն,  
Եթե ամեն մեկս մեր ես-ն ու ինքնությունը  
Խցկում ենք քաղաքավարություն կոչվող  
Կաղապարի ներսը...  
Եվ քարոզելով կուլտուրա, նրբաձեւություն՝  
Դառնում մեր իսկ անքաղաքավարության պոհը...



Հայրենիք.  
Ահա այն սահմանը,  
Որից այն կողմ  
կարտուն է սեղմում կոկորդի...  
Եվ օտարությունն է ծանրանում ուսիդ:  
Հայրենիքն ամեն պզգի  
ամենամեծ թանգարանն է...  
Մարդու կյանքը՝ իր կամ նմուշ՝  
Մոռացված ու անմոռաց պատկերումով...



Աստվածահավատությունն  
Իմ ինքնության դռնից ներս ու դուրս է անում.  
Պաղում... հապաղում է հավատս,  
Վախենում եմ մեկ էլ կողպեքվի դուռը  
Ներս մտնելու ժամանակ,  
Չէի ուզենա մնալ հավատ -  
անհավատության դռան արանքում.  
Հավատը հաճախ դառնում է օրապահ  
Եվ ուժ է տալիս՝  
Թեկուկ օրվա հետ քարշ գալու համար:



Այնքան մոտ է թվում ավարտը,  
Այնինչ՝ սկիզբը դեռ չի հասցրել վրձնել  
իր բացման ներքնանկարը...

Հիանում եմ նրանով, ով չսիրելով  
Իրավունք չի վերապահում տիրել իրեն...  
Եվ հասկանում նրան, ով, սիրելով հանդերձ,  
Չի համարձակվում տրվել ամբողջությամբ,  
Քանզի սերը, որի մասին այնպես խոսվում է,  
Այնքան էլ սեր չէ.

Պահն անմեկնելի է նույնիսկ ինձ համար...  
Զգացմունքներս համապորվել,  
բայց եւ անպորվել են...

Երկնքի անսահմանության մեջ  
Հայթայթում եմ ինձ անհրաժեշտ սնունդը՝  
անսահմանությանը անակնկալ:

Գրկում եմ երկիրն...  
ու հայտնվում երկնքի գրկում.

Որքա՛ն հպորություն, բայց եւ անպորություն կա  
Այս գրկախառնումների մեջ:

Երեւակայություն, փայփայիր շնչառությունս,  
Քանզի այն նաեւ քոնն է,  
Քո աննախադեպ նախադիպումը...

Ես վախենում եմ հեռավորությունից,  
Բայց եւ ձգտում հեռավորության,  
Քանզի այնտեղ թաքնված է սպասումը,  
Գուցե չիրականացվող, բայց անհրաժեշտ

ու պարտադրող շարունակությանը,  
Եվ այն ավարտին, որը մոտ է թվում այնքան,  
Եվ այն սկզբին, որը դեռ չի գտել իրեն,  
քանզի դեռ չի սկսվել, դեռ չկա:



Փոշու մեջ կորել է ճշմարտության հետքը.  
 Նստվածքի ներսն ու դուրսը վերք է...  
 Փորձաքարեր եմ նետում փորձադաշտ.  
 Վիրավոր թռչնի ճիչ է ամենուր.  
 Եվ փոշի... փոշի...  
 Մեկնել եմ միտքս փոշոտ գորգի պես  
 Ջուր, օձառ... ոչինչ չի օգնում...  
 Ձեռքերիս նինջ է իջել.  
 Տաքի գերչափապանցում... եւ փոշի, փոշի...  
 Փոշեծածկույթից չեն շարժվում ոտքերս.  
 Թափահարում եմ...  
 Խոտերն աղերս են արձակում.  
 Ականջներս արցունքոտվում են...  
 Փոշին... աղեկիվում է...



Ես չգիտեմ, թե ինչպես է  
 Ծաղիկն իր նմանին  
 Բարեւ ասում առավոտյան,  
 Երեկոյան՝ բարի գիշեր, բարի երապ:  
 Ես չգիտեմ, թե ինչպես է  
 Խոտը խոտին, հողը՝ հողին, ծառը՝ ծառին  
 Հարցնում առողջության եւ այլի մասին...  
 Ես չգիտեմ, թե ինչպես է  
 Վիրավորված ճնճողուկը  
 Բարեկամին իր մոտ կանչում...  
 Եվ չգիտեմ, թե ծիտն իր ծլվլոցով  
   ինչ է բարբառում...  
 Չգիտեմ, բայց ամենից շատ  
 Հենց նրանց եմ ես հասկանում...



Անձրեւը գույն ունի...  
Ոմանք կասեին սեն է, ոմանք՝ մոխրագույնը,  
Իսկ ես ասում եմ՝ ամենաապիտակը,  
Քանզի անձրեւի ամեն մի կաթիլը  
Մի մեղեդի է, որի հնչեղությամբ  
Նրբերանգվում է նույնիսկ սարսափը,  
Տիրությունը թեւեր է առնում...  
Հնչու՛մ է անձրեւը... փայլատակվում եմ...  
Որքա՛ն հույսեր կան, որքան լույսեր...  
Անձրեւի՛ր, աշխարհ,  
մաքրության պակաս կա...




Պաշտում եմ արեւը,  
Որն ինձ է նայում...  
Պաշտում եմ քամին,  
Որն ինձ է շոյում...  
Պաշտում եմ  
ձմեռն ու ձյունն  
այն փափուկ,  
Որ ինձ ճերմակի  
Փայլով են ժպտում...  
Պաշտում եմ եւ այն  
անմեղությունը,  
Որով աչքերս են  
Աշխարհին նայում...

❖  
 Արդեն չգիտեմ՝  
     ես որքանով եմ ես,  
 Որքանով՝ կեղծված,  
 Որքանով՝ անկեղծ,  
 Որքանով՝ բացված,  
 Որքանով՝ անտես...  
 Շուրջս աշխարհն է  
     վապքի մեջ մտել՝  
 Միշտ դեպի առաջ.  
     ուր եւ ինչպես.  
     կարելու չէ...  
 Խոսքի ապատություն է.  
 Խոսելու ցանկություն չկա,  
 Ամենքն էլ ամեն ինչ գիտեն,  
 Ինչո՞վ պարմացնել  
     եւ ինչի՞ համար...  
 Հիշողության էջերում  
     մանկությունը  
 Ամենապայծառ նկարավարումն է,  
 Ես այն տվել եմ պատերապմին.  
 Չէի ուզում,  
     բայց ո՞վ էր հարցնողը...  
 Ցավը մարդու էության ծնունդն է,  
     բայց ոչ՝ մահը.  
 Մենք նրան ենք շարունակում,  
     նա՝ մեզ: Կա՞ ավելի մեծ  
     բարեկամություն:  
 Թիթեռն ապրում է մեկ օր,  
 Բայց ապրում է...  
 Մեր սիրտն էլ

մի ըմբոստ թիթեռ է,  
Բաց չթողնենք.  
Կյանքն այսօր այնքան հեռու է  
                  ծաղկաբույրվելուց,  
Որ կարող է թռչել - հեռանալ...  
Մարմինն էլ առանց հոգի  
                  գոյություն չունի:  
Գժգոհությունը  
                  անամբողջությունից է,  
Եթե պատերազմ չլիներ,  
                  գուցե ես ավելի  
                  եւ լինեի...  
Չգիտեմ ինչ,  
Բաց ինչ - որ բան եմ թողել  
                  այնտեղ, որտեղ չեմ եղել...  
Ժամանակն էլ ետ տալու  
                  մտադրություն չունեմ.  
Ո՛վ կարող է երաշխավորել,  
Որ հաջորդ անգամ նույնը չի լինի,  
Չեմ ուզում նորից  
                  աղոթելու ձեւը սովորել.  
Սովորությունն ինձ մոտ  
                  դժվարանցանելի է.  
Ես էլ ապատության ջատագովն եմ,  
Թեեւ անհնարին է ապրել  
Եվ ինչ - որ մեկից  
                  ու ինչ - որ բանից կախված չլինել...  
Երկինքը ժպիտ նկարեց դեմքիս...  
Եվ ես դարձա  
                  եւ՝ ավելի, քան, երբեւէ..



Ես մոտ էի բոլորին,  
Բայց բոլորից ուշ հասա...  
Իմ գալն ու գնալը մի բանի նման չէ...  
Իմ չսպասելն ավելի երկար տեւեց,  
քան՝ սպասելը...  
Ինչ - որ մեկը փորձեց  
գերեվարել միտքս՝  
Կանգնեցնելով ակնթարթը.  
Կանգնեց. այդ ինչ - որ մեկի  
Ձեռքի ժամացույցը միայն թե...  
Իսկ իմը՝ ճշտապահ էր ավելի,  
քան՝ երբեւէ:  
Ինչ - որ մեկը սիրում է  
չսիրելու համար,  
Ուրեմն հեշտ կլինի մոռանալը:  
Եթե սիրել, ապա սիրելու համար.  
Միայն թե ուշանում է այն միակը,  
Որին սպասելն ավելի հեշտ է,  
քան՝ չսպասելը...  
Ասում են՝ ամեն մեկն, ի վերջո,  
հանդիպում է իր նմանին.  
Ցնծում եւ... տխրում եմ...  
Չհանդիպելու վախն ավելի ուժեղ է,  
Քան՝ հանդիպելու...  
Բոլորը վերջին են սպասում,  
Ես՝ սկզբին... ուշանում է...





1

Իմ մայրությունը  
ես քեզ եմ տալիս  
Մինչեւ ծնվելդ...  
Ծնվելուց հետո  
դու ես մայրանում.

Ես անպաշտպան եմ,  
Բանաստեղծություն,

2

Ես ծնվում եմ տողիդ մեջ,  
Բայց տող չեմ դառնում,  
Տողդ ծնվում է իմ մեջ...  
Ու ես՝ ես եմ դառնում:



Ինձ ոչ-որ կարգին երես չի տվել,  
Ես էլ մի կարգին երես առնող չեմ...  
Պատճառաբանված մի կյանք եմ ապրել.  
Շորթված մանկություն,  
Պատանություն՝ գունաթափ, տխու՛ր...  
Եվ ապրում եմ դեռ բեկորների մեջ.  
Վիրակապված է

հիշողությանս ամբողջ մարմինը...

Ինձ ոչ-որ կարգին երես չի տվել,  
Ես էլ մի կարգին երես առնող չեմ,  
Որ չտալու դեպքում՝ ուժով վերցնեմ,  
Թեեւ պատերապմն ինձ ի՞նչ էր տալու,  
Երբ ամենամեծ պարգեւը կյանքում  
Կյանքն էր այդ պահին,  
Որին ես գրկել ու ձուլվել էի՝  
չմտածելով ոչնչի մասին...



Մանկությունը  
Արեւախառն ձյունացուլանքով  
արարվող ակնթարթ է,  
Որը հուշ դառնալուց հետո է  
արժեւորվում,  
Երբ սենն ու սպիտակն են  
տնօրինում ժամանակը,  
Երբ անցյալով է հաղթահարվում  
ներկան,  
Եվ մարդն իր շնչառության մեջ  
սգում է,  
Որ ինչ-որ տեղ ինչ-որ բան է կորցրել՝  
Անվերադարձ ու շատ կարելու բան...



1  
Հրաշքների  
աշխարհում եմ եղել  
մինչեւ ծնվելս.  
Ծնվելուց հետո  
Հայտնվել եմ մի տեղ,  
Ուր հրաշքներ չկան...

2

Ծնվել եմ մարգարեի նման՝  
Կյանքն արդեն պարպած.  
Ինչպիսի՞նն էր այն,  
Որ շուրթերիս վրա  
Դառնություն է մնացել միայն...  
Ես ապրել եմ մինչեւ ծնվելս...



Ես շարունակ ինչ-որ բան եմ գտնում,  
 Ինչ-որ մեկին եմ գտնում շարունակ...  
 Եվ շարունակ ինչ-որ բան եմ կորցնում,  
 Ինչ-որ մեկին եմ կորցնում շարունակ.  
 Երկինքը խռովում,  
   արտասվում-հանգստանում է...  
 Ժամացույցները քայլում,  
   շտապում, վազում են,  
 Իսկ ես գտնում եմ ինչ-որ կանգառ  
 Եւ ինչ-որ ճանապարհ եմ  
   երազապատում.  
 Գնում եմ..., գնում եմ..., գնում...  
 Տեսնես՝ ճանապարհներն են իմ  
   գնալը գնալ դարձնում,  
 Թե՛ իմ գնալն է ճանապարհներին  
   ճանապարհ պահում...



Գրիչը  
 Հերթական անուն գրելուց  
   հրաժարվում է,  
 Անունն իրողության  
   բացակայությունն է...  
 Դատարկությունն անգործություն է  
   իր անվան պատճառով,  
 Իսկ իրականում՝ ոչինչ է...  
 Ոչինչն իրականության  
   արտացոլումն է.  
 Ես իմ գրիչն եմ...

❖  
Բացարձակ մերկության մեջ  
մեռնում է մաքրությունը.  
Հագուստների տակ  
այն մեռել է վաղուց...  
Գրկում եմ ճշմարտությունը,  
բայց ես՝ ե՛ս չեմ դառնում...  
Ճշմարտությունը բացահայտելու  
եւ հաստատելու համար  
Մոռանում ենք մեր առաքելությունը.  
Եվ ամեն ինչ  
դառնում է կեղծ ու անհիմն:

❖  
Դժգոհության հետքերի մեջ  
գոհունակության ճիչ եմ  
արձանագրում.  
Վավերացված ճշմարտությունը  
պատառոտելու ցանկության  
մեջ եմ...  
Ես անհեռարձակ բարոյախոս եմ,  
ինձ լաղը բնածին խուլն է:

❖  
Իմ չգրված տողերը  
դեռ ոչ մեկինը չեն,  
անգամ՝ իմը,  
Գրվածներն էլ...  
Զգայմունքները ժամանակի հետ  
անցնում են...  
Որտե՞ղ է նրանց հավաքատունը.  
Գիրքն ավելին է...  
Իմ անունը կրող ոչ մի հայացք  
այլեւս ինձ չի պատկանում.  
Ես էլ այլեւս չեմ պատկանում  
նրանց...  
Խորհրդավորությունն է իմ  
հանգրվանը...

❖  
Ես փնտրում եմ  
երապներիս խորքում՝  
տաք ու փափուկ պահված,  
Չինացող, չմոռացվող, չգողացվող  
երապանքս...  
Ես փնտրում եմ նրան  
իմ աչքերի շարժում.  
Եվ գտնում եմ նրան,  
Սակայն ամեն անգամ  
իմ գտածը այն չի լինում:



❖  
Դու իրական չես,  
Քո հանդեպ իմ պգացածը՝  
նույնպես...

Չեմ ուզում  
երեւակայությունս աղավաղել  
իրականությամբ:

❖  
Երանելի են երապներիս աչքերը,  
Որ փակվում են  
վարդի նորածիլ  
կոկոնի նման.  
Քնիս կրծքի տակ  
թրթռացող փետուրները  
Սպիտակաթեւ աղավնիներ են...

❖  
Երապներիս մեջ  
ծաղկաթեւ թռչներամ է...  
Հոգնած մտքերս  
հանգստության սերմերը  
Երապիս  
Ծաղկաքնից են հավաքում...  
Այլեւայլ ապդեցությունների նիրհը  
խորն է...  
Ծաղիկներով է լցված ողջ քունս.  
Վարդի թերթերով վրձնի՛ր  
անունս:



Միրո առամները  
    ծամում են մտքիս նյարդերը.  
Միրոս պարկում է՝  
    արյանս չկայացած  
    շրջանառությամբ.  
Զարկերակս ծաղկատար անոթ է,  
Որտեղ այլեւս ծաղիկներ չեն աճում...  
Ճնճղուկների բույն է մտքիս անոթը.  
Նորից աղմուկ է...  
Միրո կտուցը այնքան էլ սուր չէ՝  
Կոցում է անունս,  
    բայց հետքեր չի թողնում:



Կապույտ հագուստից  
Աչքերը կապույտ չեն դառնում,  
Ոչ էլ սեւից՝ սեւ, սպիտակից՝  
    սպիտակ...  
Կապույտ մտքերից  
Օրվա ակունքը  
    կապույտ չի դառնում,  
Ոչ էլ սեւից՝ սեւ,  
    սպիտակից՝ սպիտակ.  
Ապրել եմ ուկում...



Կապույտը, Չարե՛նց,  
դու շատ ես սիրում,  
Բսկ ես կապույտին նայում եմ  
այնպես. առանց այրվելու...  
Նայում եմ որպես  
տողակիր մի հուշ,  
Որ դու ես թողել  
Ինչ-որ մի կապույտ, կապու՛յտ աչքերում,  
Որտեղ այնքանով դու կաս,  
Որքանով լինում են քեզնմանները՝  
մեկ ու միակի եզակիությանը...  
Կապույտի՛ արքա,  
Մեւ սքեմավոր մի կյանք ունեցար,  
Որը ապրեցիր ու չլիացար,  
Ու չլիացավ քո կյանքում ոչինչ  
քո տողից բացի,  
Որը արեւ է ու արեւածին...  
Կապու՛յտը..., Չարե՛նց,  
Ես քո կապույտն եմ հիմա երապում:



Բանաստեղծություն գրելու համար  
Ես քո աչքերի  
երազն եմ պարպում...  
Բանաստեղծություն կարդալու  
համար  
Հայացքիդ անտիպ  
Բանատողերն եմ հանձնում իմ  
հոգուն...

❖  
Հոգու շարժապատկերը  
Դեմք է նկարում  
անհայտ դիմապատկերով.  
Միտքս շարունակ է  
տառանվանումներ,  
Որոնք այդպես էլ  
բառեր չեն դառնում.  
Ճակատագրին շտապեցնելու  
ջանքերն անիմաստ են:

❖  
Ես գունավորումից պուրկ  
նկարապարդում եմ.  
Տեղավորվում եմ  
Բնության վրձնած նկարներից  
մեկում՝  
Որպես հավաստում  
այն ճշմարտության,  
Որ բոլորս էլ  
Բնության մի պատկերն ենք,  
Մի վրձնի շարժում,  
Որից ծնվում ենք...  
Եւ...որով ապրում...

❖  
Վերակառուցված տների,  
ավերակված քաղաքների  
Ցանկությունը միանման է...  
Ծոված ելքերի, մեռնող  
մուտքերի մտապաղմունքը՝  
Ապրել ավելին...  
Մեր չկայացած հանդիպումների  
ակնկալումն է՝  
Լինել ավելին...

❖  
Աչքերիս տարածությունը  
Շնչավորի՛ր քո անվան գրությունը.  
Շշուկների մեջ անշշո՛ւկ եղիր...  
Եվ հավատացրո՛ւ չեղած բաներում...  
Անծանոթ բառին  
հենց այսօր հրաժեշտ կտամ:

❖  
Անուրախ է երգը,  
որովհետեւ ես եմ երգողը,  
Բառերն անհասկանալի են,  
քանզի ես եմ արտասանողը.  
Ծիծաղում են նույնիսկ արյունքներս.  
Հնարավոր չէ բոլորին  
ուրախացնել միաժամանակ:



Ես շատ հեռու եմ  
Աշխարհ կոչվող լաբիրինթոսից.  
Իմ բնակավայրը  
Չհայտնաբերված աշխարհամաս է,  
Ես էլ այդ աշխարհամասի  
Միակ, չհայտնաբերված բնակիչը.  
Հայտնաբերելով ինձ`  
Կհայտնաբերեք  
այդ աշխարհամասը...



Պահվածքիս մեջ  
Աշխարհի տառապող աչքերն են.  
Փակված ությունից  
մեռնում են պատուհանները...  
Հույսը մարում է  
Պատերի ձանձրացած հայացքներում.  
Մեզ միաձուլողն ու տարանջատողը  
գույնն է.  
Հողն արյամբ երկիր է նկարում...



Ծանծաղ ձեռագրի տակ  
Խորաթափանց ձեռքեր են  
ստորագրում...  
Տո՛ւր անունս`  
առանց վերլուծականի.  
Մեղք են տառերը...



Բանաստեղծություն,  
Քեզ չունենալու համար  
Ես երբեք չկամ,  
Իսկ ունենալու համար՝  
Միշտ եմ պատրաստ,  
Առեւանգի՛ր ինձ, տա՛ր,  
Ես պատրաստ եմ  
քո կողմից  
Մշտապե՛ս լինել  
գողացված...



Զգացմունքների մասին լսելիս՝  
Ես հարցական նայում եմ քեզ  
Եվ հասկանում,  
Որ շփոթահար իմ աչքերում  
Միրո համար բառեր չկան:



Նայում եմ քեզ  
ու չեմ հասկանում՝  
Վերջն է, թե՛ սկիզբը...  
Դու անհաջող փորձեր ես անում՝  
Կյանքիս երակը բացված տեսնելու...  
Խմել եմ ուլում՝ հարբելու համար.  
Թե կարելի է  
Միրվել եւ չսիրելուց չտառապել...  
Քո ձայնի մեջ երգ եմ գտել.  
Քե՛զ եմ ընտրում:



Երեւակայիր, որ ես խոսում եմ.  
Իմ խոսքում  
լռության շունչն է՝  
անշունչ պահի մեջ...

Երեւակայիր, որ ես լռում եմ.  
Հոգուս ամեն մի լարը  
Մի երգչախմբի ձայնապնակ է  
իր մեջ ամփոփում...  
Երեւակայիր, որ ես սիրում եմ...



Աչքերս խլում եմ  
քեզ սպասելու ճանապարհից.  
Սպասումն ընդամենը  
կորցրածի հավաստումն է...  
Հուշերս ազատ եմ արձակում՝  
Ուրախության բույրերից մեկն  
իմ մեջ հավերժելու համար...  
Բա՛ց թող ձեռքերս, մտքերս,  
Մոռացի՛ր ապրելու ձեւն իմ,  
Ես ժամանակի թելերի մեջ եմ,  
Եվ քո պատճառով, երազե ե՛րգ իմ,  
Կարող եմ ընկնել թեւաբախումից:



Դու չես ուզում պարտվել  
Եվ պարտվում ես այնտեղ,  
Որտեղ չես ուզում...  
Դու վեց տասնամյակ ապրել,  
Բայց չես հասկացել,  
Որ պետք է ապրել  
Եվ չցնդել այնտեղ,  
Որտեղ կարող էիր  
պարզապես սիրել...  
Ամեն ինչ կյանքում  
պահատիրական է,  
Անցողիկ է նաև  
սիրել հարաբերականը:



Անվերժանելի հարաբերականը  
Քողարկում եմ  
հեղինակային մեջբերումներով.  
Աշխարհում մարդու  
երկու տեսակ կա՝  
Տղամարդ եւ կին...  
Ուրիշ տեսակներ ես չեմ ընդունում...  
Զգացմունքը  
Վերջնականապես չի հանդերձապատվել...  
Երկրագունդը,  
Որն իր ստեղծման օրից  
չդադարող շուրջպարի է  
դատապարտված,  
Թող կանգ չառնի.  
Չհասունացած այնքան պահեր կան,  
Որ մեղք է չզգալ...

❖  
Կանաչ մտքերի հոխորտման մեջ  
Վխտում է իմ՝ քեզ գտնելու մարմաջը.  
Նարնջագույն երապանքներս  
երկար մնալուց  
գունաթափվում են...  
Այնքա՛ն միամիտ են սպասումներս.  
Միամտությունից մտքերս դեղնում են...

❖  
Կյանքը հավերժի  
փայլատակումն է,  
Ճիչը՝ պատմության...  
Գատարկվում եմ՝  
վատնելով թե՛ եղած,  
Թե՛ երեւակայական հիշողությանս  
մատունքները...  
Ու շարունակում ճանապարհս  
անժամանակ արահետով.  
Որքան շատ բան կարելի է  
գրել՝ չգրելով...  
Ցավը վերջանում է այնտեղ,  
որտեղից սկսվում է,  
Եվ սկսվում է այնտեղից, որտեղ  
վերջանում է...  
Իմ արյամբ, իմ շնչով եմ պզում  
հողի վեհաձայնումը,  
Որը, գուցե, ինչ-որ տեղ  
այնքան է իմը,  
Որքան իմը չեն ոչ մեկն ու ոչինչ...  
Հողը հավերժի ծարավ է, ես՝ հողի...  
Գրկի՛ր ու գտի՛ր այդ  
հավերժությունը:



Աթոռների շուրջպարը  
 բանավեճի մթնոլորտ է ստեղծել,  
 Գլխավոր բանախոսը սեղանն է.  
 Ծանր լռության ներքո  
 համբանում է ճշմարտությունը.  
 Թեև ձեռք է դառնում,  
 ձեռքը՝ բազուկ...  
 Կոլումբոսի հայտնաբերած  
 աշխարհամասը  
 Ծովից-ծով Հայաստան չի դառնա,  
 Եթե անգամ Տիգրան Մեծը  
 վաղուց արդեն չկա:



1  
 Հայաստան,  
 Քո անվան չխամրող փայլի մեջ  
 Մաշտոցյան այբուբենի  
 վեհությունն ու հպորությունն է...  
 Քո անվան անկոտրում կամքի մեջ  
 Հայ ազգի դարավոր պայքարի  
 Ուժն ու հուսապինումն է...  
 2  
 Լեռներիդ մեջ է  
 Սրտացավը քո պատմության,  
 Հաղթանակն ու պարտությունը  
 ամբողջությամբ...  
 Լեռներով լուռ պարուրված են  
 Քո երազներն ու տեսիլները  
 հրաշակամ,

Եվ հավատը,  
Քո հավատը ամբողջական...  
Լեռների հետ, լեռների մեջ,  
Լեռներովդ ես հավերժական:



Հայերեն խոսել`  
Նշանակում է մի քիչ հայ լինել,  
Իսկ սրտի պարկերով, արյան  
գնդերով, հոգով ու շնչով  
Հայ կարող է լինել նա',  
Ով Հայաստանը երբեք չի տեսել,  
Բայց երազներում նրա գրկում է,  
Նա', ով գուցե  
մի քանի բառ գիտի միայն,  
Բայց ավելի լավ է հասկանում,  
Քան նա', ով ապրում է  
Հայաստանում...  
Ու, թե հեռուն ձգում-վմայլում է,  
Ապգուրջունն էլ նույն ուժով է  
սիրտ մտնում,  
Ավելին` այն, ինչ քոնն է  
Եվ շատ է հեռու,  
Առավել թանկ է սիրտը  
գնահատում...  
Հայերեն խոսել`  
Նշանակում է մի քիչ հայ լինել,  
Իսկ ամբողջապես`  
պետք է հայ ծնվել  
Հայաստանի տարածքին  
անձանոթ թեև:

❖  
Ծառերի, քարերի, մայրերի  
արանքներում  
Ողբերգությունն է ծվարել  
ու հեկեկում է անարցունք...  
Մեքենաների անիվների,  
մարդկանց շարժումների  
հայացքներում  
Պոտորվում է մտքի պարպությունը,  
Երկնքի թափվում են սառցե  
արցունքներ.  
Ձյունն այլեւ ձյուն չէ մեր  
երկրամասում:

❖  
Երկինքն այլեւ երկինք չէ,  
Ես անկտուր տան մեջ եմ  
բնակվում,  
Այն սովորաբար անվանում ենք  
երկիր,  
Ես նրա մեջ այլեւ նրա մեջ չեմ.  
Անբնակավայր է հոգուս  
տարածականը...

❖  
Երեւակայությունս  
    աչքերիս կտավին  
    քեզ է նկարում.  
Սրտիս վրձինը գույներիդ մեջ  
    գույներ է դնում...  
Կատարելությունը նկարի մեջ է,  
Նկարից այն կողմ  
    իրականությունն է...

❖  
Ակամայից ես նայում եմ քեզ  
Եվ պզու՛մ ներկայությունս  
    աչքերիդ մեջ...  
Չես ժպտում.  
Հայացքդ ավելին է,  
Քան վայրկյանական ժպիտը...  
Տեսնես ո՞վ է գտել  
    սիրո անունը.  
Ես հիմա փառաբանում եմ նրան՝  
Տեսնելով ինձ քո աչքերում՝  
Որպես կանաչ ճանապարհի  
    ուղենշան:

❖  
Հրաշքը դանդաղ,  
    անձայն քաղերով  
    ինձ հյուր է գալիս...  
Մտնելով քո մեջ՝ մոտենում է ինձ.  
Ես քեզ եմ գտնում...  
Եվ գտնում եմ ինձ՝  
    ծաղկաթերթ, անբիծ...



1

Երկրպագի՛ր  
Ինձ քո սիրով,  
Եվ թող լռությունը  
Դառնա հայացք,  
Շարժում,  
Խոստովանանք՝ սրտի բառերով.  
Ես սինաթափվում եմ  
սրտախաղերում:

2

Երկրպագի՛ր ինձ քո սիրով,  
Եվ թող աղոթքը քո հավատամքի  
Իմ շուրթերի վրա թիթեռվի ու մնա:

3

Դու իմ հավատի կարիքն ես հիմա...  
Զգացմունքի մի անհայտ տարածք  
գրկում է միտքս.  
Եվ պարզ է դառնում  
անորոշությունը:



Սերը ծաղիկ չէ,  
որ թառամի,  
Սերը պարիսպ չէ,  
որ բռնագրավվի,  
Ցայսօր հայտնի չէ,  
թե սերը ի՛նչ է...



1

Երջանկությունը բառարաններով  
խարույկ է անում...

Ու ես լռում եմ.

Ասա՝ սիրում եմ...

Ասա՝ չեմ կարող ապրել առանց քեզ,

Ասա՝ առանց քեզ մահն էլ տխուր է...

Ասա...

Այնինչ՝ լռում ես.

2

Բառեր պետք չեն, որ հասկանամ,  
թե իմ հանդեպ ինչ ես զգում...

Եւ ինչ եմ զգում ես քո հանդեպ...

Բառեր պետք չեն,

որ կարոտիդ ներսում

իմ կարոտը գտնեմ.

Բառեր պետք չեն...

Երջանկությունը բառեր չի սիրում:



Ուպում ես ինձ հետ խաղալ,  
Բայց չգիտես,  
Որ արդեն քանի դար է  
դադարել եմ ընկերակցել  
նման խաղերին,  
Ավելի ճիշտ՝  
ընդհանրապես չեմ սկսել.  
Ծնվել եմ  
Արդեն ամեն ինչ կյանքում  
ամփոփած.  
Մերը, դեռ թեևեր չառած,  
Արդեն անթեւ է  
պատկերվում իմ դեմ:



1

Դու ինձ ավելին ստացիր,  
քան՝ կարողացա լսել...  
Եվ դո՛ւ էիր մեղավոր,  
Եվ՝ ես...

2

Դու հայացքդ մեկնել  
փարել-փաթաթել ես վարդին.  
Նայելու խորհուրդն այդ մեծ  
Անհայտ է նույնիսկ վարդերին:



Ես դանդաղ ու անշտապ  
գարուն եմ ապրում...  
Աշունն էլ արդեն  
Հաստատակամ  
Իր մեղեդին է բարձրաձայնում.  
Աշուն՝ գարնան փոքրիկ այգում...  
Հոգի՛ս...  
Աշուն. տխուր, անբուր, անշունչ.  
Ափսոսանքի խոսքեր  
Եւ շշուկներ անհույս...  
Տխրություն եմ անթել  
Եւ թեւահատ աշուն:



Սուկո՛ւմ եմ...  
Որքա՛ն դաժան են մեր  
աստվածները.  
Վախենում եմ  
Նախ նրանց համար,  
Հետո արդեն՝ իմ եւ ուրիշների.  
Ում համար աստված  
գոյություն ունի  
Ոչ միայն խոսքի,  
պատրանքի սահմանագծում,  
Այլ եւ՝ հոգու եւ մտքի,  
մարմնի ու գոյի ամբողջության  
մեջ...  
Վիրավորված եմ  
Կյանքի եւ մարդու անապնդությունից.  
Ես ինքս ինձնից  
վիրավորված եմ:



Արթնանում եմ վաղ առավոտյան,  
Ներս քաշում այն սպասող  
սարսափը,  
Որից ծնկներս թուլանալու  
ճանապարհին եմ...  
Ես սպսում եմ  
Նույնիսկ  
Արյանս շրջանառությունը,  
Որ դիմանամ  
Այս ծեծված-ճնշված  
կրկնությունը...



Խիղճը ձեռքիս՝ մի օր կյանք մտա...  
Այսօր էլ պատրաստվում եմ  
Խիղճը հոգումս դուրս գալ  
հրապարակ...  
Զարմանալի է՝  
Խղճում եմ ո՛չ թե ի՛նչ,  
այլ՝ իսկ ճի՛ս...



1  
Երակների մեջ կյանք է.  
Կյանքս դադարում է երակ լինել...  
Ինձ հասկանալը գրեթե  
անհնար է,  
Չհասկանալը՝ պարպապես  
անհնար...  
Աստված, աղոթքս գրեթե  
անհնար է,  
Չաղոթելս՝ պարպապես անհնար...  
Հավատս անհնար է.  
Աստված, չկա՛ս:

2

Թռիչք կա սրտիս վարկերում,  
Վապոդ շշուկներ,  
գգված մերկություն.  
Ինձ հասկանալը  
Չհասկանալու նման մի բան է:



Դու հավատո՞ւմ ես Աստծուն.  
Ես քո աստվածն եմ,  
Այն մեռելահունց  
տիտուր աստվածը,  
Որին ապրեցնում են  
սառը դատումները.  
Զգացմունքը մահ է:



1

Պահը օրվա խաղաղությունը  
պատվապրկում է.  
Երիցս մեղավոր են անմեղները...  
Ամենամեծ մեղքը անմեղությունն է.  
Մեղքերն  
անմեղության արդյունք են.  
Մեղքի նախասկիզբն Եվայի  
Ժամանակներից է:

2

Աղոթե՛ք հոգուս հանգստության համար,  
Այլապես՝  
Ես առավել մեծ մեղսավոր եմ,  
քան Եվան՝  
Ադամին խնձորը  
համտեսեցնելու ժամանակ.  
Մեղքս մեղք չգործելն է:



Երազներիս մեջ  
պայքարում եմ  
իրականության  
անդուր պենքերով.  
Ես մահ եմ խաղում...  
Եւ անմահություն.  
Հաղթանակ չկա ո՛չ կյանքի,  
ո՛չ մահվան պայքարում:



Ժամանակ, այս ո՛ւր է գնում մեր մոլորակը...  
Երազները պարզ հաշվարկումից  
այն կողմ չեն անցնում,  
Զգացմունքները,  
խիղճն ու սպասումները,  
Այլևս ոչ մի գին չունեն.  
Անարժեք խոկում...  
Ես՝ մոլի հավատացյալս,  
Դեմ եմ գնում բոլոր տեսակի  
հավատամքներին,  
Եվ հավատում եմ միմիայն նրան,  
ով ճակատագրի կնիքն է կրում:



Թույլն է ուժեղին ուժեղ դարձնում,  
Այլապես՝ ուժեղը ո՛րն է...  
Դեկը տղամարդու ձեռքին է.  
Ուղղությունը կինն է ցույց տալիս...  
Եվա՛ն Ադամին մատնացույց արեց  
դրախտն արժեւորելու  
ճանապարհը:



Կանգնեցնում եմ  
Պատուհանների փախուստը...  
Ամոքում՝ արդարացման հասնող  
Իմ անշարժությունը...  
Ես փախուստի մեջ եմ՝  
Տան չորս պատերի արանքում...



Խաչը, որ ոսկե ապարանջանով  
Արդեն քանի տարի է  
Գրկել է վիպս,  
Օրերս հաճախակի է շրջվում.  
Ինձնի՛ց է խռով, թե՛...  
աշխարհի դեմ է  
շրջում հայացքը...

Ոսկին իմ դարի հագուստն է.  
Տե՛ր, թե՛ հպատակ է...  
Իմ այս դարի մեջ  
Ինձ ամեն ինչ խորթ է:



Փողոցներն արտավում են  
անցորդների հառաչներից.  
Անձրեւում է ժամանակը...  
Երջանկությունը թայրտում ու  
շնչահատվում է,  
Ինչպես ձուկը ջրից դուրս,  
Լճակներ են գոյանում. ցավալճակներ.  
Երկիրը երկնքի աչքերից  
արցունքներ է գողանում...



Ես քամի եմ.  
Իմ հոգին սահմաններից դուրս է...  
Ամպ եմ.  
հոգի չունեմ  
ամեն անգամ  
տարբեր ձեւերով եմ  
արտացոլվում...

Աձրեւ եմ.  
Երկրի ու երկնքի գծապատկերում  
ծով, գետ, լիճ, պարպապես  
ջուր եմ դառնում:

Ե՛ս...  
հոգի՛ ու մարմի՛ն ունեմ.  
Երակներս  
քամին, ամպն ու անձրեւն են  
շնչավորում:



Ծաղիկը, որ կոչված է ծաղկելու,  
Թող չծաղկի.  
Ափսոս են թռչնած ծաղկաթերթերը,  
Տերեւը, եթե պետք է ընկնի,  
Թող ծառը տերեւ չունենա.  
Մեղք է տերեւաթափը,  
Խոտը, որ կոչված է կոխկրտվելու,  
Թող հողից չծնվի.  
Նայելիս՝ հոգիս արցունքոտվում է:



#### *Վ. Տերյանին*

Տիրուօթունը

դալուկ աղջկա

կերպարանքով

Մտել է քո մեջ.

Պղտորել

Հոգուդ անդորրը անկեղծ,

Դու էլ մեկ առ մեկ երգեր ես ձոնել,

Ապետել տողում...

Եվ ապրո՛ւմ ես

այդ նույն տողերում...



Մտքիս լուսանցքը

սեր է ավետում...

Պահի ձեռքից ընկնում է հայացքս.

Բառերում կերպարդ անկրկնելի է...

Ես ամենապատկերավոր

երկինքն եմ նկարում՝

Խմբագրելով ամպերն ու լուսինը՝

արեւի երկունքի մեջ.

Հոգուս երգը սիրտ երկրպագումն է:

❖  
Երկինքը ցնցվում է.  
Արժեքները քարշ են գալիս  
ցնցոտիներով...

Դատարկությունից  
փակվելու սպառնալիքի տակ են  
հոգեբուժարանները,

Այնինչ՝  
Սովորականի համեմատ  
մեծացել է խելագարների թիվը...

❖  
Մեր օրերում ամեն ինչի թարսը  
շիտակ է, օրինակելի...  
Հոգուս ընդգծված վրձնապատկերը  
դատապարտվում է  
անընդունելության...

Աշխարհը կյանքի առաջ բացելու  
դռներ ունի նախատեսած...  
Այսօր իմ թռիչքը կտավ է հասուն,  
Վաղը կլինի չկախյալ ծաղրանկար:

❖  
Խոտն իր բառապաշարը  
Դատարկում է  
անցնող-գնացողների մտքերի վրա...  
Հայացքս տեղավորում եմ ցավի  
արանքում

Արյան սարսուռ կա  
խոտ-բառ-հայացք  
սահմանագծում:

❖  
Հոգին պատրաստ չէ  
լիակատար մերկության.  
Մորեմերկությունը հոգու համար չէ.  
Այնպե՛ս եմ ուզում խոստովանել  
առավել եւս՝  
այ՛ն, ինչ չեմ արել...

❖  
Լույսը վառել՝ մտածում եմ  
կյանքի մասին.  
Տիրությունը նահանջում է,  
եւ ժպտում ենք միասին:

❖  
Բայ են հոգուս  
պատուհանները.  
Ծիծեռնակներն  
այնտեղ են բնավորվում  
ամեն Աստծո տարի:



Շատ եմ արտաբերվում  
Քի՛չ տվեք անունս,  
    Եթե լավ բան չեք ասելու.  
Իմ լավը՝ ճշմարիտ խոսքն է...  
Այնտեղ, ուր ե՛ս չեմ կեղծվում,  
    կեղծո՛ւմ են ինձ...

Գավառական եմ՝  
Ամենամեծ քաղաքի եռուկեռի մեջ...  
Վերածնունդս  
Հիսուսի խորհրդավորությունն ունի...  
Ես քաղաքակրթությունն եմ՝  
Մի փոքրիկ գյուղի մի  
    փոքրիկ տան մեջ.  
Ամենօրյա տաղտկություն եմ ես:



Դու ինձ ես տալիս  
Աշխարհի բոլոր մայրամուտները...  
Եվ ես սպիտակ ժապավեններով  
    հարդարում եմ  
    նրանց վարսերը.  
Անմեղ են գեղեցիկ երազները...  
Մեղքի սեւ թելերը, որ թոկեր են դառել,  
Գրկախառնվում են լույսի ծվեններին...  
Երանի աշխարհը  
Միայն լուսաբացներով քներ ու պարթներ.  
Որքա՛ն իրական է Աստծո պատկերը:



❖  
Քո լռության մեջ  
տողի ծավալ կա.  
Անսկիզբ ու անվերջ՝  
երգերի համար...  
Լռությանդ մեջ  
մահվան սարսուռ կա.  
Վախենում եմ  
լռությունդ կարդալ...

❖  
Այս ո՛ւր ենք գնում,  
եւ ի՞նչի համար...  
Նպատակներն ու երազանքները  
ծալում ենք հին լաթի նման...  
Դնում անդուկում՝ տատի կտակած.  
Ես իմ տատիկից  
անդուկ չեմ ստացել,  
Նպատակաուղղված երազներս էլ  
ճիշտ իմ հագով են,  
Այնպես որ՝  
Ես գիտեմ, թե ուր եմ գնում  
եւ ինչի համար:

❖  
Ինձ նվիրած  
Քո պատրանքները  
համբուրում են աչքերս...  
Եվ միտքս դառնում է ճանապարհ,  
Հայացքս՝ թռչող վերելակ...  
Ծիծաղից բարձրանում եմ.  
Վարդագույն է երկինքը...



Այսօր ծրագրում ենք  
մեր վաղվա անելիքը,  
Իսկ վաղը լինում է այն,  
ինչ չենք ծրագրում...

Ամեն անգամ  
միտքն առավել երկար  
ճանապարհ է նախատեսում,  
Քան՝ կարող ենք հաղթահարել...  
Վերջն այնտեղ է, որտեղ սկիպբ կա,  
Թեև  
Մշտապես  
Աշխարհի մի որեւէ անկյունում՝  
Մի որեւէ տուն կամ բնակչություն  
Առավել շուտ է վերջակետվում,  
Քան՝ սկսվում է...



Քաղաքակրթությունը  
սկիպբ է առել  
Թերությունները քողարկելու  
անհրաժեշտությունից...  
Ես այլեւս  
քաղաքավարություն խաղալու  
անհրաժեշտություն չունեմ,  
Այն իմ մեջ է, էությանս  
շնչառությունում,  
Նույնիսկ ավելի, քան պետք է.  
...Այլեւս ոչինչ հուպական չէ:



Ձմեռվա ցրտին  
 թերթում եմ անցյալը.  
 Ափսոսանքները ծածկում եմ ինձ  
 իրենց բոլե վերմակով.  
 Պատճառաբանումներն  
 այլեւս ծաղրանկարներ են.  
 Շոգում եմ...



Մի՛ փորձիր թաթախվել  
 երապներիս մեջ,  
 Ես, այնուամենայնիվ, երջանիկ եմ,  
 Որովհետեւ չկա իրականությունը.  
 Ես իմ սահմաններում եմ...  
 Կամքս քողարկել եմ անպատշաճամբ՝  
 Անտարբերություն խաղալու  
 համար.  
 Այնտեղ է իմ ողջ հպարտությունը...  
 Ջգայուն հողաթափերս  
 Լցնում եմ մոտակա աղբամանը  
 Եվ հագնում ոտքերս ցավեցնող  
 կոշիկներ...  
 Հագուստներիս մեջ տարօրինակ  
 անտարբերություն կա,  
 Տարօրինակ մի վերացում.  
 Իրականությունը ցավոտ է  
 Նույնիսկ հագուստներիս համար...  
 Ես ոչ մի տեղ չկամ.  
 Սովերիս քողարկումն է՝  
 անտրամադիր անտարբերությամբ:



Անցյալի հուշերս թողնում եմ  
անցյալին,  
Ներկան՝ կապկառում ներկադով,  
Եվ պգում, որ հետոն այլեւս չկա  
իմ պարտականության ցուցակում.  
Ես վախենում եմ քեզ կորցնելուց,  
Թեեւ այն, ինչ չկա՝ չի կարող կորչել...  
Մենք միշտ էլ ինչ-որ բան ենք  
ինչ-որ տեղ կորցնում՝  
Չգիտակցված, երբեմն էլ՝  
չհասկանալով...  
Երանելի է չկայացած պահը,  
Եվ թշվառ՝ երանությունը,  
երբ համեմատելու ոչինչ չկա:



Ցավի միտքը  
իմ աչքերով  
իր վիրավոր ճիչն է արձակում,  
Հերման՝ Հեսսե,  
Իմ ներսն ու դուրսը  
Քեզ ծանոթ  
օտարոտիությամբ են  
խարխալում:



Օրվա սպասելիքներս քանդակել եմ դեմքիս,  
Եվ ծածկել այն չերեւացող շղարշներով.  
Որքա՛ն մեծ է պարմանքս՝  
Հայելու մեջ դեմքս չգտնելու պատճառով:



Ես դուրս եմ ինքս ինձանից.  
    հեռու, օտար, անըմբռնելի...  
Ուղեղի ողջ պարունակությամբ  
Վերանայում եմ  
Անցյալի ու ապագայի  
    արխիվները  
Եվ հետո միայն,  
    ներկային թեւանցուկ,  
Հաղորդակցվում հեռու, օտար,  
    անբնակելի՝ ինձ հետ.  
Ամենաձանթո դեմքերից  
    ամենաանձանթոը իմն է.  
Տխուր, անհայտ, դառը:



Հայացքս  
Խորհում է փողոցի մասին,  
Որ դատարկությունից  
    արցունքոտվում է,  
Երպի մասին,  
Որը կյանքի դռնով  
    ներս չի մտնում...  
Սեղանի մասին,  
Որը նստողի հավերժ կարոտ է...  
Ծառերի մասին,  
Որոնց մերկությունն  
    իմ աչքերն են որդեգրում...  
Հայացքիս ձեռքերը  
    չեղած գույների  
    ներկեր են փնտրում:

❖  
Մեղանին դրած ծաղկամանի մեջ  
Երպաներս են՝ թարմ ու աներեր,  
Ձեռքերս՝ ծաղկասեր հայացքով  
Շտապում են ապրել այդ  
թարմությունը ժամանակավոր...

❖  
Ես ինձ այնքան մենակ եմ պզում  
այս մարդաշատ տիեզերքում...  
Արցունքներս  
Ո՛չ այն է՝ լվանում,  
Ո՛չ այն է՝ կեղտոտում են դեմքս.  
Երեսարբիչը  
մատներիս շնչառությունն է...

❖  
Ջարդե՛ք ճաղերը.  
վանդակապատ եմ...  
Կորած-մոլորված պատի արանքում  
անպորություն եմ ինքս ինձ  
խաղում,  
Արդեն շատ եմ մեծ խաղերի  
համար...  
Իմ ժամանակը...  
Այն հենց այնպես վատնում եմ  
ու չեմ մտածում կորստի մասին.  
Այնքա՛ն բան եմ կորցնում՝  
Չտիրելով պահին,  
իրողությանն ու ժամանակին...



1.

Ես ցավ եմ պզում  
Իմ ավնվության համար,  
Սպասումների,  
Իմ անսխալական ջահելության...  
Ես ցավ եմ պզում  
Այս ամենի հանդեպ  
          պգացած իմ ցավի համար...

2

Ինձ ապատեք  
Համեստ աղջիկ լինելու  
          պարտականությունից,  
Այլապես ինձ կկորցնեք  
Իմ համեստության մեջ.  
Մեռնում եմ անըմբռստությունից...



Մերկությունը գրկել եմ լսողությամբ...  
Եվ աչքերով շոշափում եմ  
          ձայնը անհուսության.  
Այս կյանքում ամեն բան ժամանակավոր է,  
Իսկ այն կյանքում՝ կյանք չկա.  
Ո՛վ է այնտեղից վերադարձել,  
          թեկուզ ոչ այսօր, երեկ կամ՝ մ.թ.առաջ...  
Առասպելը երեւակայության պահանջն է,  
Իրականությունը  
          երեւակայության նահանջը...



Այնքան շատ լքված իրեր, երեւոյթներ  
եւ շատ ուրիշ բաներ կան աշխարհում.  
Եւ այն շնիկը, որ վապում է  
իւր անբախտոյթյան ճանապարհը...  
Եւ իմ այն պահը, որ տեղավորվում է  
աշխարհից լքված իրերի, երեւոյթների,  
...շատ ուրիշ այլ բաների  
եւ այն շնիկի բախտի ճանապարհներին:



1  
Ես տարածոյթուն եմ՝  
քողարկված անշարժոյթամբ...  
Վերադարձի մեջ՝ անմնացորդ,  
Դարձի մեջ՝ անվերադարձ:

2  
Շշուկվում եմ  
հետքերիս ջարդված տողերը.  
Անշարժոյթունը  
Երկարակեցոյթյան վալսն է պտտում  
Որերորդ անգամ...  
Ես հեռանում եմ,  
Այնքան անավարտ մի հեռացումով,  
Որ նայողը հեռացումի մասին  
մոռանում է անվերադարձ:



Ես մի ծաղկի բույր եմ առնում,  
Որն այլեւս ոչ մեկին չի հուպում...  
Միրտս մի պաշտամունքի  
առաջ է մերկանում,  
Որը հնության երախն է ընկել,  
Ես աղոթում եմ մի տաճարում,  
Որը երկրային կյանքի հետ  
ոչ մի կապ չունի...  
Մենա՛կ եմ...  
Հնամաջ հագուստների մեջ՝  
նորաձեւ սանրվածքով...  
Հոգուս մորեմերկության մեջ  
բծեր են հայտնվել.  
Հոգիս այլեւս մերկ չէ... եւ ես  
տխուր չեմ,  
Աստված իմ մեջ է,  
Ժամանակակից աստվածը...  
Խոսի՛ր իմ լեզվով,  
Ես քո լեզուն եմ ժամանակավոր.  
Ժամանակակից ամեն ինչ  
ժամանակավոր է.  
Կյանքում հավերժական չէ անգամ  
հավերժությունը...  
Ես այնքան տխուր եմ...  
եւ մերկ են մտքերս,  
մորեմերկ, տխու՛ր:



Կյանքի հետ բաժաներով  
լիկյոր եմ խմել,  
Բայց չեմ օրորվում  
գլխապտույտից,  
Աչքերիս առաջ  
միշտ նույն խմորն է,  
Գուլյների խմոր,  
որ հայ չի դառնում:



Նորից օրվա մեջ նոր օր է ծաղկում.  
Հայացքներ, որոնց բացակայությունը  
Ներկա լինելուց էլ`  
պարզ են ու հասկանալի.  
Դու ինձ նայելուդ  
ապատություն տվիր,  
Ես` հեռանալու...



Դատապարտված երապներս  
քեզնով են շնչում...  
Ծաղկաթուփի հույսերս,  
մերժելով ինձ, թողնում են մարմինս.  
Ես ինձ կորցրել եմ...  
Տեսնող-իմացողներին  
Խնդրում եմ պանգահարել  
անձամբ ինձ...  
Հոգուս արտագաղթն  
ո՞վ կվերադարձնի.  
Ջարդուփշուր են  
վերադարձներս:



Հավասարակշռությունը կորցրած՝  
ինքնավատնվում են  
կյանքահատիկները...  
Եվ միտքը դառնում է պատրանք,  
Եվ պահը գտնում է ավարտ...  
Կանգնում եմ հետքերիս շարժից.  
Անել-չանելու միջեւ  
անիմաստ են բազմակետերը.  
Ինչ անես-չանես՝  
Անել-չանելու բաներ էլի մնում են...  
Այնտեղ, որտեղ սկիզբ կա,  
կանխորոշված է վերջը:



Քեզ չափում-ձեռում եմ,  
 Ինչպես դերձակը՝ հագուստ կարելիս,  
 Բայց դու հագուստ չես,  
 Ես էլ հեռու եմ դերձակությունից:



Իմ հայացքի մերկությունից  
 Դու մրսում ես,  
 Իսկ ես,  
 Քեզ նայելով,  
 Իմ արեւն եմ գտնում  
 Քո մեջ.  
 Իմ հայացքի լեզուն  
 դու չգիտես:



Ես քեզ գտա՛...  
 Ուրիշներն այլեւս տեղ չեն  
 գտնում  
 Իմ աչքերի տարածքներում...  
 Քեզ տեսնելիս  
 Կորցնում եմ մարդ լինելու  
 պարտությունս  
 Եվ դառնում եմ թիթեռամիտ...  
 Մեկօրյա պատմությունը  
 թիթեռների  
 Ճիշտ է, աղջիկ:



Քո նայելու ձեւն  
Ինձ անմահացնում է.  
Եվ ժպիտը,  
Որ չկար քո ծննդից առաջ,  
Հանկարծ ծնվում է...



Կասկածները պեղում են ուղեղի  
չհայտնաբերած ծալքերը.  
Այլեւս կարծրատիպեր չկան...  
Ես դատարկ տարածություն եմ.  
Իմ լիացումը  
սահմանափակվում է  
իմ հեռավորությամբ:



1  
Ես քեզ նայում եմ`  
Ինչպես հեռացող մի մտերմության,  
Եվ մտերմանում` ինչպես հեռացում...

2  
Ես մի շատ մոտիկ հեռավորություն եմ...  
Քայլերիս շարժը նման է անշարժության,  
Անշարժությունը` արագավազի,  
Ես գրեթե ոչ մի տեղ չկամ...  
Իմ հեռուն ավելի մոտիկ է,  
քան շնչառությունս:



1

Դու իմ իդեալի կերպարն ես հագնում,  
Բայց ուշանում է խոստովանանքը.  
Նայում եմ պահին, որ սիրտ է մտնում,  
Եվ մոռանում այդ պահից բացի

ամեն, ամեն ինչ...

Անունդ եմ հայթայթում երկնքի մովից  
Ու կապում ձեռքս,  
Բայց ձեռքս ի տես համայն աշխարհի  
չի բարձրաձայնում...

Ու ես լռում եմ.

2

Չսիրելով՝ ավելի հեշտ է  
սեր խոստովանել,

Քան՝ սիրելով...

Դու ավելին ես, քան՝ սերը...



Կանգառներ չկան,  
Ես վերանայում եմ իմ  
սպասումների հեռացումները.

Այլեւս ոչինչ հաստատ չէ...

Հեռացի՛ր,

Եթե կարող ես հեռավորությամբ  
հաստատվել իմ մեջ:

❖  
Կյանքը քեզ չի ծաղրում...  
Դու ես ծաղրում  
կյանքին  
եւ ինքդ քեզ,  
Քո վախվորածությամբ,  
Պատրանքներով,  
երեւակայությամբ,  
Որը ցնորվածության  
աստիճաններ է պարունակում  
իր մեջ:

❖  
Ժամանակը հայելի է,  
Որը ցույց է տալիս  
մեր ո՛վ կամ ի՛նչ լինելը.  
Հայելիները մերկ են ու տխուր...

❖  
Ամենադժբախտներն են  
բանաստեղծները.  
Գիտեն, որ երջանկություն չկա...  
Ամենաքիչը սիրում են կյանքը...  
Կյանքն են սիրում ամենաշատը՝  
Ամենահեշտը դժվարացնելով,  
հեշտացնելով ամենադժվարը:  
Ամենաաղքատներն են  
բանաստեղծները՝  
ոչինչ չունեն, ոչի՛նչ...  
Անգամ երգը,  
երգը նրանց՝ իրենցը չէ:

Բանաստեղծներն  
ամենահարուստներն են.  
Ամեն ինչ ունեն...  
Առեղծվածում  
անմահացնում են սերը  
Եվ տառապում՝ իրենց իսկ  
երեւակայած սիրո չգոյությունից:  
Բանաստեղծներն օդ ու ջուր են,  
Բայց միշտ ծարավ են,  
շնչահեղձ են միշտ  
Բանաստեղծները ծով ու երկինք են,  
Բայց միշտ անափ են,  
անօթեւան են միշտ...  
Բանաստեղծները... ինչ ասես, որ...  
չեն բանաստեղծները...  
Ամենաերջանիկներն են  
բանաստեղծները,  
Գիտեն, որ երջանկություն չկա...  
Ես ո՛չ մի բանի մասին  
չեմ ուզում խոսել,  
Առավել եւս՝ հիմա.  
Սո՛ւս, գրիչս սեղանի վրա  
Երազ է տեսնում...

Ա  
Ր  
Ա  
Ր  
ՈՒ  
Մ



*Ամենամեծ գլուխգործոցը  
Որ ստեղծվել է աշխարհի երեսին,  
մարդն է,  
Մնացածը մանր-մուկեր  
բաներ են...*



Իմ փոքրիկ,  
Դու էլ բանաստեղծության նման  
ծնվում- ձեւավորվում ես իմ մեջ՝  
Քո բնականոն կերպարը  
ստանալու համար,  
Որ աշխարհ մտնես  
արդեն կայացած քո դիմանկարով...  
Իսկ այնուհետեւ քո խոսքը կասես.  
Հայտնի կլինես,  
կամ անհայտ, գուցե.  
Իմը լինելով,  
իմը չես լինի արդեն...  
Բանաստեղծները գրում են  
իրենց սրտինը.  
Իրենց ու իրենց սիրտն են  
դնում տողի մեջ  
Եվ հանձնելով այն ընթերցողին՝  
Իրենցը լինելով  
դառնում է ուրիշներինը...  
Աշխարհի բոլոր մայրերը  
բանաստեղծներ են,  
Սակայն ոչ բոլորին է վիճակված  
ստեղծել գլուխգործոցներ...  
Իմ գլուխգործոցը դարձի՛ր, փոքրիկս...



Այսուհետ, եթե գրեմ  
Քեզ եմ գրելու,  
Եվ քեզ են լինելու նվիրված  
    իմ հաղթած բոլոր տողերը,  
որովհետեւ  
քեզնով է պայմանավորված  
երջանկության իմ բանաձեւը,  
Դու իմ ամենան ես.  
    ամենա... իմը...



Դու աշխարհ եկար՝  
Աշխարհ բերելով  
    մի նոր աշխարհ,  
Որտեղ հեքիաթն է տիրական...  
Երազելու պաշտոնաթող  
    ունակությունս  
Նորից գործի անցավ:



Փոքրիկս,  
Իմ երեկը, այսօրն ու վաղը  
    քեզնով են սկսվում  
եւ քեզանով շարունակվում,  
Անկախ նրանից, թե դու  
    որտեղ կաս...  
Իմ պատմությունն ես,  
իմ սկիզբն ու  
    շարունակությունը,  
Դու իմն ես  
Ավելի, քան՝ ինքս...

❖  
Քո ծննունդով ապդարարեցիր  
նաեւ իմ ծնունդը...  
Առաջին ճիչդ, որ արձակեցիր՝  
Որպէս հավաստումը քո ինքնության,  
իմ հարցերի պատասխանը եղավ...  
Քո առաջին լացը իմ հայացքի մեջ  
Ժպիտ նկարեց՝ երջանիկ ու մեծ...  
Եվ ես փոխվեցի, դարձա ուրիշ մարդ,  
Ում աչքերը ժպտացին այլ կերպ,  
Միտքս մտավ անհայտ տարածքներ,  
Եվ այնպիսի բառեր ասացին շուրթերս,  
Որոնք մինչ այդ բացակայում էին  
իմ բառաֆոնդի մեջ...  
Դու աշխարհ եկար՝  
Աշխարհ բերելով մի նոր աշխարհ,  
Որը քոնն է, մի քիչ էլ՝ իմը...  
Երբ մայրն առաջին անգամ  
Լսում է իր փոքրիկի լացի ձայնը,  
Երջանկությունից արցունքոտվում է,  
Թերեւս հենց այդպէս էլ սկսվում է  
Երեխաների ու ծնողների  
հակասությունը:

❖  
Աշխարհի ամեն ինչը սուտ է,  
Միակ ճիշտն այն փոքրիկն է,  
Որն հիմա սպասում է  
Ինձ տանը...

❖  
Դու ծնվեցիր,  
Եվ ես գտա քո մեջ  
այն արյան գույնը,  
Որը ես ունեմ...  
Դիմագծերդ,  
Որ դեռ կլցվեն  
Եվ կկայանան...  
Բացահայտում եմ  
ամեն օր  
հայելու առաջ...

❖  
Փոքրի՛կս,  
Քո ծննդով  
Ծնվեց նաեւ իմ երջանկությունը...  
Եվ ահա քեզ իմ գիրկն առած՝  
Զբոսնում եմ կյանքի  
արահետներով,  
Վազն էլ իրար ձեռքից բռնած  
Կարելիների ու չի կարելիների  
խաչմերուկներում  
Կհարթենք ճամփան իրականության,  
Իսկ հաջորդ օրն արդեն  
Դու, ճիշտ ու սխալի քո ճամփան բացած,



մի քիչ կարդալուց հետո  
մի քանի թուղթով  
որդուս թողեցի փակ գրքի,  
հին ու նոր մեքենաների հետ  
միեւնույն անկողնում քնած,  
երբ վերադարձա  
մեկ տարեկան Տիգրանս  
նստել  
գիրքն էր թերթում.  
Լավ տողի կարոտ հայացքս  
Վերջապես իր կարոտն առավ...



Այսօր ամեն մեկս  
Ասում ենք այն,  
Ինչ չենք մտածում,  
Իսկ մտածածը  
Չենք բարձրաձայնում,  
Արդյունքը դառնում է այն,  
Ինչն հարիր է պահին,  
Բայց ոչ մեր պգացողությանն  
ու ներշնչանքին...

Այսօր ամեն ինչ կեղծ է,  
Անգամ կեղծելը,  
Խաբկանք է խոսքը,  
Ժպիտը, դեմքը,  
Անգամ դիմակը...  
Ճշմարտությունը,  
Որը պայմանական է,  
Ինչպես եւ սուտը,  
Այսօր ամեն մեկիս

Գրավաթուղթն է,  
Որը տարբեր ձեռով  
ու բովանդակությամբ  
գրավ ենք դնում  
եւ հանում նորից...

Այսօր բոլորս  
Խոսում ենք ճշմարտության մասին,  
Այնինչ՝ ճշմարտությունը  
Մարդկության  
սկզբնավորումից առ այսօր  
Շարունակում է բեմում չերեւալ...



Վերջերս ինքս ինձ համար բացահայտեցի,  
Որ բանաստեղծներ չկան՝  
թերեւս գրիչ վերցնողների մեջ...  
Փողոցում կանգնած  
Երիտասարդի հայացքն  
իր սիրած աղջկա աչքերում նկարում է  
աշխարհի ամենառոմանտիկ  
բանաստեղծությունը...  
Վերջերս պոեզիան  
բանաստեղծությունից փախչում է...

❖  
Միրելը բառ չէ.  
կյանք է, սպասում...  
անկակալում մի մեծ երապի,  
Որով ծնվում  
կամ մահանում է  
երջանկությունը...  
Ամեն մեկս էլ ունենք երջանկության  
մեր սահմանումը...

❖  
Ես քեզ եմ լքում,  
Կյանքը՝ ինձ,  
Եվ ինչպես կյանքն է  
անտեղյակ ինձնից,  
Այնպես էլ ես  
չեմ ճանաչում քեզ...

❖  
Կյանք,  
Քեզ հետ խոսելը հեշտ է, թե՛ դժվար,  
Որ կարկամում եմ քեզ հանդիպելիս...



Դու ինձ արդեն պետք ես.  
Մարմինս ապատ ու անպաշտպան  
մնալու կարիք ունի,  
Որովհետեւ հոգին  
Մարմնի շարունակությունն է,  
Մարմինը՝ հոգու արտացոլանքը.  
Գեղեցիկ մարմինը  
Գեղեցիկ հոգի ունենալու ձգտումն է.  
Ես արդեն սկսում եմ հավատալ  
հոգու գեղեցկությանը...



Մթությունը ստվերներ է ծնում,  
Երկու չքնաղ պատկեր...  
Երկու չքնաղ երապ,  
Որ չեն կարող չասել.  
-Շնորհակալ եմ, որ կա...  
-Շնորհակալ եմ, որ կանք...



Դու հավատում էիր,  
Եվ քո հավատը իրական դարձրեց  
Այն ճանապարհը,  
Որով ես ու դու սկսեցինք քայլել...  
Եվ անանուն մի փողոց  
կոչվեց հենց մեր անունով...

❖  
Երեւակայութեանս թեւերով  
